13.

№ 58 ՇԱԲԱԹ, 19 ՄԱՐՏԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 19 ՄԱՐՏԻ № 58

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10-2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Մարտի 1-ից մինչեւ տարվայ վերջը 9 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վաղը, մարտի 20-ին, ս. Նշան եկեղեցում, պատարագից յետոյ ժամը 11½-ին կատարվելու է

ՍՕՖԻԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեակի առթիվ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, որի մասին յայտնում է հանգուցեալի վշտահար ամուսին Գարեգին քահանայ Առաքելեանցը իր զաւակներով:
253. 1—1

Ա Զ Դ
ԱՒԵՏԵԱՆ-ԼԻՍԻՑԵԱՆԻ ՑԻՐԿԻ ԾԻՆՈՒԹԻՒՆ
ԳՐԱՆԴ-ՎԻՕ
Կիրակի, մարտի 20-ին, տեղի կունենայ անօրինակ եւ խոշոր
ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖԻ ԲԱՑՈՒՄԸ:
Մանրամասնութիւնները աֆիշաներում:
(ա.օ.) առ. 294. 3—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արտիստակ. Ընկ., տէլէֆոն № 355.
Պահեստում միշտ կան մեծ բազմակութեամբ բոլոր պաստառներ ամենավերջին ոճով
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(ե. շ.) առ. 207. 50—5

Форманъ противъ насморка
Форманъ
коробка 25 коп.

Ծախվում են անարժէք կեղծիքներ: Իսկական Ֆորմանի իւրաքանչիւր արկղիկը պէտք է ունենայ հետևեալ ֆիրման. Դրէզդէնի Քիմիական Լաբօրատօրիա Լինգնէրի, Դրէզդէնում:
(16,19) առ. (M.75945) 240. 0—2

ՄԵՆՔ ՉՈՒՆԵՆՔ ՈՒԺԵՂ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ.

Այնպիսի ուժեղ ինտելիգենցիա, ուժեղ կամքով և բնաւորութեամբ, անսասան իր համոզումներով—պահպանողական թէ ազատամտական,—ուժեղ, թէև նոյնիսկ սահմանափակ, բայց ամփոփ և լիակատար աշխարհահայեացքով, որպիսին մենք ունէինք XIX դարում, այժմ, XX դարում, չունենք:

Եւ սակայն XX դարում ինտելիգենտների թիւը, քանակը անհամեմատ աւելի աճել, մեծացել է: Ինտելիգենտ անհատներ մենք այժմ աւելի շատ ունենք, քան XIX դարում:

Արդեօք քանակի մեծութիւնն է առաջ բերել որակի նուազումը:

Ըստ երևոյթին, որքան շատ և մեծ լինի ինտելիգենտ ույժերի թիւը, այնքան և զօրեղ պէտք է լինի ինքն ինտելիգենցիան իր մտաւոր, բարոյական և հոգևոր արտայայտութիւններով:

Բայց մենք ընդհակառակն ենք տեսնում: Մինչ XIX դարի հայ ինտելիգենցիան, պատկանող թէ առաջադիմական-ազատամտական և թէ պահպանողական բանակներին, իր ուղղութիւնը, աշխարհահայեացքը, համոզմունքը պաշտպանում էր ֆանատիկոսական եռանդով, ազնուաբար, աննահանջ կերպով, տոկուն հաստատամտութեամբ—XX դարի հայ ինտելիգենցիան հանդիպում է օպպորտունիստ, ճկուն, երերուն, պատրաստ ամէն բոպէ փոխելու համոզմունքները, թեքվելու, կռանալու, խոնարհվելու, ուրանալու այն, որին երէկ երկրպագում էր, և երկրպագելու նրան, որին երէկ ժխտում էր:

Ապացոյցներ այժմեան հայ ինտելիգենտ երիտասարդների այդպիսի ճկունութեան, տատամսութեան, յողդողդութեան, անկայունութեան—բազմաթիւ են:

Դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ մի ինտելիգենտ, ըստ ամենայնի անկախ և ազնիւ երդուեալ-հաւատարմատարի օրինակը, երբ նա, մղված ազնիւ և մաքուր զգացումներով, ժողովրդասիրական դրդումներով, սկսեց կռիւ մղել մաֆիական գործելակերպով գործող մի կազմակերպութեան դէմ, բայց, նկատելով որ իր անձնական շահերը, փառասիրական ձգտումները վտանգի են ենթարկվում, սկսեց վախկոտօրէն նահանջել և հաշտութեան ձեռք կարկառել վնասակար կազմակերպութեան. ապա, երբ նկատեց, որ այդպիսի բարեկամութիւնը, թէև ոչ անկեղծ և առերես, կարող է նոյնպէս վնասել իրան այլ շրջաններում, չը քաշվեց հրաժարվել այդ բարեկամութիւնից և նորից յայտարարել իրան հակառակորդ:

Դեռ մեր յիշողութեան մէջ թարմ է մի ուսեալ և գիտնական երիտասարդ եկեղեցականի օրինակը, երբ նա որակվելով այդ միևնոյն մաֆիական կազմակերպութիւնից մատնիչ և դաւաճան տիտղոսով, որոնցով որակվել էր և յիշեալ երդուեալ-հաւատարմատարը, նոյնպէս դրդված փառասիրական ձգտումներից և երկիւղից, սկսեց նահանջել և կոմպրոմիսների մէջ մտնել իր խղճմտանքի և համոզմունքների հետ, ինչպէս կոմպրոմիսի մէջ էր մտել երդ.-հաւատարմատարը:

Դեռ նորերս մի գրող հրապարակօրէն յայտարարեց, թէ ինքը մեղանչել է ճշմարտութեան և վաւերագրերի դէմ, այսինքն խարդախել է ճշմարտութիւնը, հակառակ է գնացել իր համոզմունքներին:

Հնարաւոր էին այսպիսի մտաւոր և բարոյական գաճաճ, անմաքուր արտայայտութիւններ անցեալ դարի վաթսունական թուականների հայ գործիչների, հայ ինտելիգենցիայի կողմից:

Ժամանակակից հայ ինտելիգենցիան, XX դարի հայ ինտելիգենցիան խիստ անտարբեր է դէպի ուղղութիւնը, համոզմունքը: Նա չունի XIX դարի ինտելիգենցիայի ոչ տոկունութիւնը, յարատեւութիւնը իր գաղափարների և համոզմունքների մէջ և ոչ էլ նրա բարոյական մաքրութիւնն ու բարձրութիւնը:

Կոմպրոմիսներ, խղճմտանքի և համոզմունքի առևտուր—ահա մեր այժմեան երիտասարդ ինտելիգենցիայի պատկերը և դէմքը:

Այո, մենք չունենք ուժեղ, տոկուն, աննկուն՝ հոգով և մտքով ինտելիգենցիա:

Հ. Սաաքեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 մարտի

Պետերբուրգ.—Գիշերը Սազոնովը անհանգիստ էր. առաւօտեան լաւ քրտնեց: Այսօր տաքութիւնն է 37,3:

Պետական Խորհրդի անդամ Շիպօվի հոգեհանգստին ներկայ էին Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնան: Դագաղի վրա պսակ դրեց Թագուհի Մարիա Ֆէօդորօվնան:

Բագու.—Բիբի-Էյբաթում Լապշինի նաւթահանքում այրվում է նաւթի ֆոնտանը: Եօթ բանւորներ ծանր այրուածքներ ստացան:

Հելսինգֆորս.—Սէյմը ուղերձի վիճաբանութիւնները յետաձգեց մինչև մարտի 18-ը:

Համալսարանական կոնսիստորիան որոշեց այսուհետև արձանագրութիւններ գրել ֆիններէն՝ կոնսիստորիայի բոլոր այն ձեռնարկութիւնների մասին, որոնք անմիջապէս բղխում են ռեկտօրից:

Խարբին.—Չինական կառավարութիւնը մերժեց Խէյլունցզեանի նահանգապետին՝ յատկացնել 5 միլիոն լան Ռուսաստանից արտաքսված և ժանտախտային նահանգներից փախած չինացիների համար հասարակական աշխատանքներ կազմակերպելու և մատակարարական օգնութեան համար: Նահանգապետի զեկուցագիրը և չինական մամուլը գործազուրկ չինացիների դրութիւնը նկարագրում են մռայլ գոյներով: Բլագովեշչենսկի լրագիրները հաղորդում են, որ եղել են դէպքեր, երբ քաղցած չինացիները յարձակվել են Ամուրով անցնող ռուսների վրա: Շատ չինացիներ վերադառնում են ռուսական ափը, ազատվելով քաղցից: Պարբերաբար նրանց վերաբերմամբ կատարվում են շուրջկալներ: Բլագովեշչենսկում լրագիրները հանգանակութիւն են սկսել յօգուտ չինացիների:

Ժանտախտային հիւանդութիւններ և մեռնողներ այլևս չը կան: Բիւլլետէնները այլ ևս չեն հրատարակվում:

Բլագովեշչենսկ.—Մարտի 14-ին 200,000 րուբլի յափշտակած պօստատարը ձերբակալվեց բոլոր փողերով:

Բերլին.—Լեհերը մի բանաձև առաջարկեցին ռէյխստագին, որ շուտով օրինագիծ ներկայացվի օտարազգիների Գերմանիայում բնակվելը կանոնաւորելու մասին, որովհետև օտարազգիները դաշնակից պետութիւններում ենթակայ են ոստիկանութեան կամայականութեան առանձնապէս Պրուսիայում, որտեղից արտաքսում են ռուսահպատակներին և աւստրիահպատակներին:

Քննվում է պետական կանցլերի նախահաշիւը: Ներկայ են կանցլերը, արտաքին գործերի մինիստրը, միւս մինիստրները և բազմաթիւ հասարակութիւն: Խօսում են բոլոր կուսակցութիւնների պարագլուխները: Բոլոր հռետորները, բացի սոցիալիստներից, շեշտում են, որ Գերմանիան բոլոր պետութիւնների հետ բարեկամ է, ընդգծում են պօտսդամեան տեսակցութեան նպաստաւոր նշանակութիւնը Ռուսաստանի հետ հին, փառահեղ յարաբերութիւնները վերականգնելու գործում: Պահպանողականների ներկայացուցիչը բացի այդ մատնանշում է, որ Գերմանիային Ռուսաստանի հետ միացնում են ոչ միայն տնտեսական շահերը, այլ և միապետական կազմի միանմանութիւնը: Այս խօսքերը յուզմունք են մտցնում սոցիալիստների աթոռներում և ծափահարութիւն առաջ բերում աջակողմեանների մէջ: Հռետոր-սոցիալիստը դատապարտում է Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը և խօսում է յօգուտ Գերմանիայի և Ֆրանսիայի համաձայնութեան: Սոցիալիստները և ազատամտողները խօսում են յօգուտ զինաթափման: Պահպանողականները և նացիօնալ-լիբերալները խօսում են ընդդէմ այդ առաջարկութեան: Կանցլերը խօսեց զինաթափութեան և միջնորդ դատարանի մասին և յայտնեց, որ միջազգային պայմանագրերը, որոնք ընդգրկել են ամբողջ աշխարհը, անիրագործելի են այն աստիճանի, ինչպէս զինաթափութեան մասին կապված միջազգային ընդհանուր համաձայնութիւնները: Խաղաղութիւնը պահպանելու համար հարկաւոր է ույժ. Թոյլը միշտ էլ կը լինի ուժեղի որսը (ծափ. աջից և կենտրոնից, սուլոց սոցիալիստների կողմից):

Վիեննա.—Պալատն արձակվեց: Ընտրութիւնները տեղի կունենան անմիջապէս:

Մարտի 27-ին տեղս է գալու գերմանական կրօնպրինցը կնոջ հետ:

Հռոմ.—Պաշտօնապէս հաղորդվում է Ջիոլիտտիի կաբինէտի մասին. մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր՝ Ջիոլիտտի, արտաքին գործերի՝ Սան-Ջուլիանո, արդարադատութեան՝ Ֆինոկիարո, հասարակ. աշխատանքների՝ Սակկի, պետական գանձատան՝ Տեդէսկո, ֆինանսների՝ Ֆակտա, երկրագործութեան՝ Նիտտի, զինուորական՝ Սպինգարդի, ծովային՝ Կատտոլիկա, լուսաւորութեան՝ Կրեդարօ, պօստային՝ Կալիսանօ:

Սօֆիա.—Կազմվեց կօալիցիօն նացիօնալ-առաջադիմական մինիստրութիւն. մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր՝ Գէշօվ, ֆինանսների՝ Տէօդորօվ, լուսաւորութեան՝ Բօբչեվ,—բոլորն էլ նացիօնալիստներ. ներքին գործերի՝ Լիւդսկանօվ, արդարադատութեան՝ Աբրաշեվ, առևտրի՝ Խրիստօվ, հասարակական աշխատանքների՝ Ֆրանգեվ, (?)—առաջադիմականներ. զինուորական՝ գեներալ Նիկիֆօրօվ:

Կազաբլանկա.—Եկաւ «Դուշեյլա», «Ֆրիան» և «Բէնլօնգ» նաւերը: Զօրքերը սկսում են ցամաք իջնել:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 մարտի

Կ. Պօլիս.—Պալատ: Մեծ վէզիրի նախահաշիւը: Օպպօզիցիան առաջարկում է երկրորդ անգամ հարցաքննում ներկայացնել պատերազմական դրութեան մասին: Աղմուկ: Օպպօզիցիայի բողոքներով ընդունվում է մեծամասնութեան առաջարկութիւնը՝ յետաձգել հարցաքննումը մինչև ներքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութիւնը: Լիւտֆի-Ֆիկրին բացագանչում է. «Ամօթ է նախագահին սարկօրէն հնազանդվել մեծամասնութեան»: Աղմուկ: Մեծամասնութեան լիդերի առաջարկութեամբ պալատը պարսաւանք է յայտնում Լիւտֆի-Ֆիկրիին: Վէզիրի նախահաշիւն ընդունվեց:

Ալբանիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, շարժումը տարածվում է Դիբրիի և Իփէկի շրջանների հարաւում: Հաղորդում են, որ Սկիւտարում ապստամբները սկսել են շարժվել: Տուզայում զինանոցը և զօրանոցը ձեռք ձգելուց յետոյ նրանք մօտեցել են Սկիւտարին և գտնվում են երկու ժամեայ հեռաւորութեան վրա: Ազգաբնակութիւնը փախչում է լճի վրայով դէպի Պօդգօրիցա՝ Չերնօգօրիայում: «Թանինը» Չերնօգօրիան համարում է մեղաւոր ալբանացիներին գրգռելու մէջ և սպառնում է ռեպրեսիաներով:

Կ. Պօլիս.—Հերքվում է կառավարութիւնից այն լուրը թէ, ապստամբները գրաւել են Սկիւտարը, սակայն կառավարութիւնը գտնում է, որ Սկիւտարը մեծ վտանգի մէջ է: Մայրաքաղաքը լի է զէնքի կանչված զօրքերով: Ամէն օր նաւերով զօրքերը մեկնում են Ալբանիա:

Ուրմիա.—Մզկիթում Նէջէֆի մուջտեհիդների կարդացած հեռագիրը, որով յորդորվում է բոյկոտի ենթարկել ռուսական ապրանքները, տպաւորութիւն չը գործեց:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պօլիս, 8 մարտ

Քանի մը օր առաջ Շատախէն (Վան) պատրիարքարան հասած թղթածրար մը՝ Թէմրանի վերջին եօթնեակ ոճիրներուն վերաբերեալ՝ ամենաբացայայտ ապացոյցը կը հայթայթէ կեդրոնի կառավարութեան անփութութեան դէպի հայոց կեանքին, ինչքին և պատւին պահպանութիւնը, և ծայրայեղ քնքուշ վերաբերմանը՝ դէպի քիւրդերը, որոնք միշտ կը քաջալերուին ինչպէս համիդեան բռնակալութեան շրջանին:

Այդ թղթածրարէն կը հասկցուի թէ Շատախի հայ բնակչութիւնը արդէն շատոնց զգացեր և սուգեր էր իր գլխուն գալիք փորձանքն և ժամանակին բազմաթիւ հեռագրերով իմացուցած էր կեդրոնական կառավարութեան, որ սակայն ոչինչ ըրած էր: Այսպէս՝ 1910 նոյեմ. 30-ին վարչապետին, խորհրդարանի նախագահին և պատրիարքարանին կացութիւնը տեղեկացուցած էին, նոյեմբ. 22-ին իրենց շրջանին օսմ. խորհրդարանի անդամներուն, դեկտ. 21-ին 757 բառով հեռագիրներ ղրկած էին վարչապետին, ծերակոյտին և խորհրդարանին նախագահներուն, դեկտ. 20-ին և յունվ. 1-ին նոյնը կրկնած էին: Յունվար 10-ին ալ ուղղակի սուլթանին դիմած էին: Իրենց և ոչ մէկ հեռագրին պատասխան և ոչ ալ կարևորութիւն տրուած էր:

Հիմա խեղճերը, յուսահատ, կը դիմեն պատրիարքարան, անոր միջոցաւ խնդրելու համար Թիւրք կառավարութենէն, որ Նորդուզի և Շատախի պատուհասը եղող հինգ բէկական ընտանիքները վարչական եղանակով հեռացնէ այդ շրջանակէն: Այդ հինգ ընտանիքներուն անունները ալ կը յիշեն և կը յարեն թէ՝ «ասոնք նպատակ դրած են անխնայ կերպով կոտորել թէ հայ և թէ քիւրդ գիւղերը: Իրենց սպաննածներուն թիւը 300-ը կը հասնի, գողցուածը անհաշիւ է. մենք աշխատած ենք, անոնք վայելած»:

Այս իրողութիւնները ցոյց կուտան, թէ կատարուած ոճիրներուն իսկական պատասխանատուն ով է:

Ասիկա ուղղակի կեդրոնի մեծամասնական դահլիճն է, որ հակառակ իրեն առաջուց եղած ազդարարութեանց՝ ոևէ նախազգուշական միջոցներ ձեռք չէ առած և իր խորհրդաւոր լռութեամբը քաջալերած է քիւրդերը յանդգնութեամբ գլուխ հանելու համար իրենց հայերը՝ ջնջելու նուիրական պարտականութիւնը, որուն կոչուած էին սուլթան Համիդի կողմէ:

Սահմանադրական—միայն անունով—կառավարութիւնը ինքն իսկ թոյլատրած է, որ ոճիրը գործուի, թերևս չհաւատալով հայոց բողոքներուն, ինչպէս իրեն չհաւատալ սովորութիւն ըրած է, երբ բողոքողները հայ, յոյն, բուլղար և այլն են:

Հիմա կատարուած իրողութիւն մը կայ, որ բարեբաղդաբար այս անգամ տեղական կառավարութեան կողմէ չէ հերքուած, այլ հաստատուած է, ինչպէս մարտ 7-ի բոլոր տեղական թերթերը կը հաստատեն Բիթլիսի կուսակալութենէն եկած հեռագիրներու վրայ: Կրնայ չհաւատալ կեղծել, կրնայ ոճիրին գոյութիւնը ուրանալ: Ապահովաբար ոչ: Արդ, տեսնենք թէ հիմա ինչ պիտի ընէ: Ուրեմն սպասենք օսմ. սահմ. կառավարութեան արդարադատութեան, որ իր հիանալի նմոյշները տուաւ արդէն Կիլիկիոյ և Մակեդոնիոյ մէջ՝ մահմեդական ոճրագործներու տեղ քրիստոնեայ անմեղներ կախաղան բարձրացնելով: Այս արդար կառավարութիւնը, որ իր ձեռքերուն մէջ ունի եօթը հայ սպաննող միայն մէկ քիւրդ մը, և հիմա որ անհերքելի իրողութիւն մը կայ, և կարելի չէ հայը՝ իբր խռովարար և զրպարտող ցոյց տալ—քանի որ հաստատողը կառավարութիւնն է—արդեօք քաջութիւնը պիտի ունենայ կախաղան բարձրացնելու այդ միակ ոճրագործը, որ եօթը հայ մեռցնելու... ծառայութիւնը մատուցած էր... թէ ոչ սուլթանին իրադէովը ներման պիտի արժանացնէ:

Մենք կը կարծենք, երևոյթներէն դատելով, թէ օսմ. կառավարութիւնը հայեր մեռցնելու անմեղ արարքի մը համար, քիւրդ մը չպիտի կախաղան բարձրացնէ, քիւրդ ամենապատուական (?) ազգը չվշտացնելու համար: Ուրիշ բան է, որ նոյն այս քնքուշ ու փափկանկատ կառավարութիւնը՝ մէկ թիւրքի սպաննութեան համար՝ ինը (9) բուլղար մէկէն կախաղան բարձրացուցած ըլլայ Մակեդոնիոյ մէջ: Երանի թէ սխալինք, բայց արդիւնքը պիտի տեսնենք: Հայոց նկատմամբ այսպէս անբաբեացակամ կառավարութեան մը Դաշնակցութեան ընծայած դարպասը, անշուշտ, չի վրիպիր հայոց, մանաւանդ գաւառի հայոց ուշադրութենէն, և ասոր համար է որ նախորդ հիացումին և համակրութեան տեղ այսօր կուգայ տիրել արհամարհանք և ատելութիւն դէպի այս պոռոտախօս, այլ սակայն մեղսակից լռութեամբ մը կառավարութեան անիրաւութիւնները քաջալերող կուսակցութիւնը։

Սակայն գոնէ իրենց այս կամաւոր լռութիւնը և դատապարտելի մեղսակցութիւնը սոյն այդ կառավարութենէն ուրիշ կերպով մը քաջալերուի։ Ա՛ս ալ տեսած չունինք մինչև հիմա։

Միութիւն և Յառաջդիմութիւն կուսակցութիւնը, մարտ 31-ի յաջորդող օրերուն, երբ այնքան խախուտ էր իր դիրքը, բոլոր տարրերը սիրաշահեցաւ, մանաւանդ անոնք, որոնք ոյժ մը, մանաւանդ զինեալ ոյժ կը ներկայացնէին։ Այսպէս, Ռումելիէն Կ. Պոլիս եկող Մ. և Ց. կուսակցութեան հաւատարիմ զինուորական ոյժը իրեն զինակից ունէր բազմաթիւ ալբանացի, սերբ և բուլգար կամաւորներ, որոնց զինակցութիւնը ապահոված էր զանազան սուտ ու թիւր խոստումներով։

Անգամ մը որ ամրացուց իր դիրքը, ճնշել սկսաւ իր զինակիցները, հեռահեռէ հարուածելով ալբանացիները, բուլգարները և այլն՝ ամենէն առաջ զանոնք զինաթափ ընելու աշխատելով, որպէս թէ անոնք ըէակսիոնէրներ ըլլային։

Նոյն այդ շրջանէն քիչ յետոյ հայաբնակ գաւառներու մէջ իր դիրքը ամրացնելու համար հոն զօրաւոր կարծուած Դաշնակցութեան ալ դարպաս ընծայեց, և անոր չէզոքացումը ապահովելէն յետոյ սպասեց այն օրուան, որ կարգը պիտի գայ հայերն ալ ընկճելու։

Երկար չեղաւ իրենց հմայաթափութիւնը, և շուտով կառավարութիւնը հասկցաւ, թէ այդ ոյժ կարծուածը իսկապէս ոչնչութիւն մըն էր, և թէ հայաբնակ գաւառներու մէջ երկու շնորհքով զէնք գոյութիւն չունէր հայոց ձեռքը, մինչ քիւրդերը այնքան խնամքով զինուած էին և լիուլի կրնային հակակշռել հայկական ուէ խլրտում։ Հետևաբար կառավարութիւնը մասնաւոր միջոցներ ձեռք առնելու առանց պէտքը տեսնելու՝ դաշնակցականաց համակրութիւնը ի նպաստ իրեն գործածեց, հայկական գաւառներու մէջ համիդեան շրջանէն ժառանգ մնացած, այլ սակայն տակաւին բոլորովին չնուիրագործուած անիրաւութիւնները սահմանադրական կառավարութեան կնիքովը նուիրագործելու համար։ Եւ հողային խնդիրը, [illegible] համիտէ գունդերու տևականութեան ծրագիրը և այլն կը քալեցնէ, միւս կողմէն անսելի ձգելով հայոց ամենէն իրաւացի բողոքները, մանաւանդ Ադանայի եղեռնին մասին, որուն համար նոյն իսկ օսմ. խորհրդարանին մէջ բողոքի ու դժգոհութեան խօսք մը լսելի չեղաւ հայ երեսփոխանի մը կողմէ։

Եւ կառավարութիւնը՝ իր կողմը ունենալով ազգին կազմակերպեալ փոքրամասնութիւնը և դէմ՝ ազգին անկազմակերպ մեծամասնութիւնը, ներողամտութեան քաղաքականութիւն մը ընդգրկելով 20,000 հայերու սպանութեան լիուլի գոհացում նկատեց հազիւ քանի մը մահմեդականներու պատժուիլը։ Իսկ մնացեալները... բանտերու դուռները կռնակի վրայ բանալով արձակեց... որոշ գաղափար մը տալու համար այդ ոճրագործներու, թէ Համիդը գահընկէց է, սակայն իր տակտիկը կայ ու կը մնայ այս երջանիկ երկրին մէջ։

Եւ հիմա, որ հաշուեյարդարութիւնը կատարուած է, կարգը եկած է Դաշնակցութեան, որ թէպէտև կեղծ զօրութիւն մըն է, սակայն կազմակերպութիւն մըն է, որուն գոյութիւնը անհաճոյ կերևայ։

Եւ հալածանքը սկսաւ ամենէն առաջ անոր ամենէն զօրաւոր տեղերուն մէջ, ինչպէս Մուշ, Երզրում և այլն։

Տակաւին այդ խնդիրները կարգադրուած չէին, և ահա Զմիւռնիայի եղբայրասպան եղեռնին երկու զոհերուն սպանիչը՝ Գասպար՝ 15 տարուան թիապարտութեան կը դատապարտուի, հակառակ դաշնակցականաց ակնկալութեան, որոնք իրենց Կ. Պոլսոյ «Ազատամարտին» և Զմիւռնիայի «Աշխատանքին» մէջ այս ոճիրը՝ իբր ինքնապաշտպանութիւն՝ քանի մը ամսուան բանտարկութեամբ վերջացած տեսնելու յոյսեր կը տածէին՝ անշուշտ... իրենց տրուած հաւաստիքի մը վրայ։ Եւ թերևս եթէ քանի մը ամիսներ առաջ այս դատը տեսնուէր, արդարութիւնը իր տեղը չգտնէր և ոճրագործը արձակուէր։

⁂

Շաբթուան ամենակարևոր նորութիւններն են օսմ. փոխառութեան հանրային ստորագրութեան ներկայացուիլը և միևնոյն ատեն Բաղդադի երկաթուղային պայմանագրութեան հրատարակուիլը։

Արդէն գիտէք, թէ փոխառութիւնը պիտի հայթայթուի գերմանաց կողմէ։ Երկաթուղիի մենաշնորհն ալ տրուած է նոյնպէս գերման ընկերութեան մը, որով գերման ազդեցութիւնը Թիւրքիոյ մէջ մէկ անգամէն երկու հսկայ քայլ կառնէ։ Եօթ միլիոն ոսկի փոխառութեան հետ, միանգամայն երաշխաւորութիւն մը կը ստանայ գերման կառավարութիւնը Ասիական Թիւրքիոյ ողնասիւնը ըլլալու կոչուած այդ երկաթուղիով իր ձեռքերուն մէջ ամփոփելով։ Խաղաղ թափանցման և տնտեսական նուաճման այս հսկայ ձեռնարկը՝ գերման քաղաքականութեան յաղթանակը կրնայ համարուիլ ընդդէմ անգլիական խորագիտութեան և ֆրանսական գոռոզութեան, որոնք չարաչար պարտուած են։

Ֆրանսա և Անգլիա, մերժելով օսմ. փոխառութիւնը, այն համոզումը ունէին, թէ Թիւրքիա այլուր դրամ չէր կրնար գտնել։ Գերմանիա այդ նեղ պահուն հասաւ Թիւրքիոյ աջակցութեան՝ այդ դրամը հայթայթելով և միւս կողմէ իրեն համար ապահովելով տնտեսական գետնի վրայ խոշոր ու ամենապատուական պատառ մը։

Մեզի համար, այս քաղաքական հաշիւներէն անջատ, խորապէս շահագրգռող հարցը հայկական գաւառներու հաղորդակցութեանց խնդիրն է, և այս տեսակէտով կրնայ ըսուիլ, թէ շատ ուրախալի երևոյթ մըն է երկաթուղիներու շինութեան տրուած մեծ կարևորութիւնը։ Ծրագիրներու վաւերացումէն հինգ տարի յետոյ Բաղդադ արդէն կցուած պիտի ըլլայ Կ. Պոլսոյ, որով առաւելն 6—7 տարի բաւական պիտի ըլլայ այս խոշոր ծրագիրը իրագործելու համար։

Շաւալ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՈՒԱՒՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգ, 10 մարտի

Մոսկվայի Լազարեան ճեմարանի պատուաւոր հոգաբարձու իշխ. Աբամելիք-Լազարեանի յայտարարութիւնը («Մշակ» № 37), թէ «ուսուցիչների, աստիճանաւորների և ազնուականների որդիք խիստ շատ կան, որոնք ցանկանում են Լազարեանի թոշակով ձրի ուսումն ստանալ, այդ պատճառով մեշչանների, շինականների և գիւղացիների որդիք չեն կարող յուսալ ձրիավարժ որդեգիրներ լինելու ճեմարանում», զարմացրեց ինձ ու տխուր խորհրդածութիւնների առիթ տուեց. ո՞րտեղից ենք եկել և դէպի ո՞ւր ենք քայլում։

Բնիկ պարսկաստանցի, աղքատ շինականի զաւակներ (ինչպէս և ազնուականների մեծ մասը *) ДВОРЯНИНЪ ռուսական ДВОРНИКЪ բառից է, որովհետև նրանք հնումն Մոսկվայի թագաւորների պալատում դռնապանի պաշտօն էին վարում), Լազարեանները աջողութիւն ունենալով՝ չը կամեցան մոռացութեան տալ իրանց ազգը. Նրանք տեսան, թէ իրանց նմանների համար որչափ մեծ անհրաժեշտութիւն են ներկայացնում կրթութիւնն ու կանոնաւոր ուսումը։ Եւ Մոսկվայում ճեմարանի հիմք դնելով՝ լայն բացին նրա դռները անխտիր հայ ուսումնածարաւ մանուկների առաջ ու երբէք չէին կարող երևակայել, որ իրանց շառաւիղը, մի ժամանակ՝ գրգված ինչ-որ դասակարգային տենդենցներով, ոտքի տակ կը տայ Լազարեանների նուիրական կամքը և ճեմարանի դռները կը գոցէ հայ մեշչանինի ու գեղջուկի առաջ. այսպէս նեղ դասակարգային բնոյթ տալ ընդհանուր հասարակական գործի՝ նշանակում է չը հասկանալ իր վրա դրված սուրբ պարտքը և չըմբռնել Լազարեանների նման մեծ սրտերի վեհ տենչանքները։

Զրկել հայ գեղջուկին, մեր ազգութեան միակ նեցուկին, և՛ լոյսից, և՛ հացից՝ դա այնպիսի մեծ սրբապղծութիւն է դէպի Լազարեանների անմահ յիշատակը, որ նրանց ոսկորները գերեզմանի մէջ հանգիստ չեն գտնի, նրանց հոգիներն այլ ևս չեն խայտայ, քանի կը տեսնեն, թէ ինչպէս արգելում են հայ գիւղացու զաւակին հեռու հիւսիսից կրակ ու լոյս տանելու դէպի իր թշուառ հօր կիսակործան խրճիթը, թէ որպէս իրանց շառաւիղը հայ ազգութիւնը բաժանել է երկու հակառակ հատուածների։

Այն հարուածները, որ այս վերջին տարին կրեց Լազարեանների այդ դժբաղդ հիմնարկութիւնը, այն տագնապալից ու աննորմալ վիճակը, որի մէջ գտնվում էր այնտեղ դասաւանդող մանկավարժական մարմինը, որից եթէ 2 հոգի միմեանց հետ խօսէին՝ պատերն իսկ աչքեր էին առնում ու դիտում նրանց, այն դանօսները, որոնք հասնում էին դէպի շրջանային հոգաբարձուն, այն վանդալական արշաւանքը, որ կատարվում էր դէպի հայութիւնը, այն միակ կապի խզումը, որ կար հայ ժողովրդի և Լազարեան ճեմարանի աշակերտութեան միջև, վերջապէս աղօթքի չարաբաստիկ հարցը, որի շնորհիւ արդէն մէկ դար գոյութիւն ունեցող տրադիցիան խախտվեց, և հարկաւ ոչ առանց հայի մասնակցութեան (այս անգամ հայ քահանայի), տեղի անբարոյականացնող անեկդոտներով իբր դասը համեմելը և այլն, և այլն,—արդէն Լազարեան ճեմարանը չափազանց նուաստացրել էին ու վարկաբեկել ռուս և հայ հասարակութեան աչքում։ Եւ իշխան Աբամելիք-Լազարեանի այս նոր յայտարարութիւնն ասես եկաւ չեղած պակասութիւնը լրացնելու, հարուածների վրա նոր հարուած աւելացնելու։ Ինչպէս մենք լսեցինք, ճեմարանի ընդունակ և ուշիմ աշակերտութիւնը կազմում են «շինականի» և «մեշչանների» որդիքը, որոնք իրանց հայրենիքի անարատ լեռներից ու դաշտերից գալիս են ճրագ տանելու իրանց խաւարաչին հայրենիքն ու օջախը լուսաւորելու նպատակով։ Նրանք են և ոչ թէ արդէն հիմնված ազնուականութեան զաւակները, որոնց առջև այսօր ճեմարանի երկու դուռն էլ լայն բացվում է, իսկ պինդ գոցվում առաջինների առաջ։

Պատուաւոր հոգաբարձուի յայտարարութիւնն անպայման ոտից մինչև գլուխ սխալ է և դէմ Լազարեանների ցանկութեան, որ նուիրական է ամենի, ևս առաւել պ. հոգաբարձուի համար։ Պետերբուրգի հայ գաղութի բանիմաց մասի վրա լուրջ պարտականութիւն կայ՝ ցոյց տալու իշխանին իր խոշոր սխալը և այն անցանկալի անջրպետը, որ պիտի առաջ գայ՝ շնորհիւ այդ տարօրինակ և անտրամաբանական կարգադրութեան՝ հայ ժողովրդի և Լազարեանների անմահ անուան միջև։

Իսկ հայ խեղճ «գիւղացին», «շինականն» ու «մեշչանինը» անտես պիտի թողնեն այդ յայտարարութիւնը, քանի որ նա իր տակ չունի ոչ մի բարոյական ու օրինական հող և արդիւնք է դասակարգային գծուծ հաշիւների։ Ժողովուրդը չը պիտի ձեռքից բաց թողնէ իր այն իրաւունքը, որ նա ստացած ունի Լազարեաններից։ Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աւազակը սպանված

Օնեգա (Արխանգ. ն.), 7 մարտի

Անցեալ շաբաթ Արխանգելսկի Օնեգա քաղաքը ժամանեց նահանգական դատարանի կազմը մի շարք քրէական գործեր քննելու։ Առաջինը այսօր, մարտի 7-ին, քննվեց աքսորական Զախարէ Կակուրաշվիլիի սպանման գործը։ Մեղադրեալ մարդասպան Ֆէօդոր Րասկազովը, որ սպանութեան օրից ազատ էր, այսօր նահանգական դատարանում իրան արդարացնում էր, ասելով որ անցեալ տարի օգոստոսի 25-ի երեկոյեան Զախարէ Կակուրաշվիլին գալիս է իր տան բակը գողութիւն անելու. Րասկազովի կինը վախենում է դուրս գալու. ինքը արբած դրութեան մէջ դուրս է գալիս, Զախարէ Կակուրաշվիլին յարձակվում է իր վրա. վերջինս հաստ փայտով երկու հարուածով Զ. Կակուրաշվիլիի գլուխը ջարդում է և վազում ոստիկանատուն կամ ուրեադնիկին յայտնելու։ Ոչ մէկին չէ կարողանում տեսնել՝ հաղորդելու, ուստի վերադառնում է ընթրում, և հետևեալ օրը ոստիկանութեան յայտնում։ Ի միջի այլոց ասաց, որ անցեալ 1904 թ. Զ. Կակուրաշվիլին իր 2 հաւն է գողացել։ Այդ գիշեր էլ եկել էր գողութեան։

Դատարանը կէս ժամ խորհրդակցելուց յետոյ մարդասպան Ֆ. Րասկազովին երեք ամիս բանտարկութեան ենթարկեց։ Միայն 3 ամիս։ Եթէ կովկասեցի լինէր, 18 տարի տաժանակիր աշխատանքի կուղարկէին։

Նիկողայոս

Չը տեսնված ցուրտ ու դաբաղը Խնուսինակում

Խնուսինակ գիւղ, 12 մարտի

Ձմեռն այս տարի շատ անողոք եղաւ։ Դեռ չեկած Նաւասարդ ձիւնի սպիտակ սաւանը մի արշին խորութեամբ ծածկեց դաշտ ու սար, որով ընտանի կենդանիները սովորականից մի ամիս առաջ մտան գոմերը։

Անժամանակ ցրտերի երևան գալը մեծ հարուած հասցրեց մեզ ու մեր հարևան մի քանի գիւղերին։

Անասունների կերը շատ շուտ վերջացաւ. փետրվար ամսի կէսից գիւղացիները դռնէդռան ընկան խոտ, դարման ճարելու, իրանց սովալլուկ անասուններին սովի ճիրաններից ազատելու. իսկ նիւթականից զուրկ դըժբաղդները չուզենալով գնալ վաշխառուի դուռը և տոկոսով փող վերցնել, որի թթուն շատ-շատ էին ծծել, բարուք համարեցին սովամահ կենդանիներին ծախել. և ծախեցին էժան-էժան՝ իրանց վճարածի մի քառորդ մասը ստանալով։ Այսքանը կարծես բաւական չէր, դաբաղ հիւանդութիւնն էլ եկաւ պակասը լրացնելու. չը կայ մի գոմ, ուր հիւանդ չը լինեն մի քանի անասուններ, բայց շնորհիւ գիւղացիների աչալրջութեան՝ հիւանդութիւնը կամաց-կամաց չքանում է առանց զոհերի։

Կերի պակասութիւնից անասունները թոյլ, անկարող են նոյնիսկ գետնի վրայով քայլել, իսկ նրանց մինչև ուշքի գալը՝ գարունն էլ կանցնի, և մենք այս տարի կը մնանք անշուշտ առանց գարնանացանի, որը տնտեսութեան գլխաւոր աղբիւրն է կազմում։ Այս տարի անասուններն անօթի, իսկ միւս տարի... բալաները. և նա պիտի ասի կուրանամ աչքեր...

Գիւղում հիւանդ եղած դէպքում կանչում են քահանային, որպէսզի Սաղմոս կարդայ հիւանդի գլխին. և քահանան կարդում է Սաղմոս, առանց մտածելու թէ ինչ է անում, փոխանակ ժողովրդին խրախուսելու, որ բժշկի դիմէ։ Եւ թող հոգևոր իշխանութիւնը աճապարէ նորից տգէտ տիրացուներին քահանայ ձեռնադրելու։

Նիկողայոս Յարութիւնեան

Խիստ ձմռան հետեւանքը

Զէյրայիլ (Կարեագ. գաւ.), 12 մարտի

Այս տարվայ աննկարագրելի ցրտերը և առատ ձիւնը գիւղացիներին հասցրել են մեծ վնասներ։ Գիւղացիների դրութիւնը աւելի դժուարացաւ մեծ ձիւն տեղալու պատճառով, և նրանք բոլորովին յուսահատված դրութեան մէջ են, մանաւանդ մարտ ամսում, երբ այստեղ ձմեռը անցած է համարվում։ Անասունների մեծ մասը խոտի և դարմանի պակասութեան պատճառով ենթարկված է զանազան հիւանդութեանց, իսկ մի մասն էլ զոհ է գնացել։

Դարմանը և խոտը այնքան են թանգացել, որ գիւղացիք չունեն ոչ մի հնարաւորութիւն առնելու, և դրա պատճառով անասունները ծախում են չնչին գներով։ Հացի պակասութիւնը նոյնպէս զգալի է գիւղացինե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Միութեան 1910 շրջանին վերջերը տեղի ունեցած կարևորագոյն գործողութիւնները.

1) Հետևեալ մասնաճիւղները հիմնուած են.

Խարթում (Սուդան).—Մասնաժողովի անդամներն են տեարք Գ. Ճիկէրճեան՝ ատենապետ, Յովհ. Սէքսէնեան՝ ատենադպիր, Ս. Քիւրքճեան՝ գանձապետ։

Կայսէրի (Թիւրքիա). — Նախաձեռնութեամբ տեարք Սենիկ Գույումճեանի և Գէորգ Ճամճեանի։ Մասնաժողովի անդամներն են տեարք Յարութիւն Եուսուֆեան՝ ատենապետ, Գէորգ Ճամճեան՝ ատենադպիր, Սենիկ Գույումճեան՝ գանձապետ, Թադէոս Մնտիկեան և Գրիգոր Գունտաքճեան։

Սիս (Թիւրքիա). — Նախաձեռնութեամբ դոքթ. Ն. Տաղաւարեանի։ Մասնաժողովի անդամներն են տեարք Մատթէոս Նալպանտեան՝ ատենապետ, Մկրտիչ Գույումճեան՝ ատենադպիր, Խորէն Բաշպէգեան՝ գանձապետ և Գրիգոր Սճրդեան։

Ժընէվ (Զուիցերիա). — Նախաձեռնութեամբ տիար Ե. Աղաթօն բէյի։ Մասնաժողովի անդամներն են տեարք դոկտ. Զարեհ Շէրիտճեան՝ ատենապետ, դոկտ. Հրանտ Էպլէյեան՝ ատենադպիր, Արշակ Զամքէրթճէն՝ գանձապետ, դոկտ. Սարգիս Չերազ և Մանուկ Կարապետեան։

Անվերս (Բելջիկա).—Նախաձեռնութեամբ տիար Տիգրան Զամքէրթճէնի։ Մասնաժողովի անդամներն են տեարք Տիգրան Զամքէրթճէն՝ ատենապետ, Գրիգոր Պարսամեան՝ ատենադպիր և Օրդիկ Բուլճեան՝ գանձապետ։

Ծանօթութիւն. — Մասնաճիւղներ հիմնուած են նաև Ադանայի, Ամասիայի, Կիւրինի, Բէրգամայի (Թիւրքիա) և Հարթֆըրտի (Ամերիկա) մէջ, բայց կեդր. ժողովը տակաւին չէ ստացած կազմութեան տեղեկագիրները և անդամացուցակները։

2) Հետևեալ տեղական մասնաժողովները մասնակի կամ ամբողջական փոփոխութիւններ կրած են.

Նիւ-Եորք.—Նորակազմ մասնաժողովի անդամներն են տեարք դոկտ. Ս. Այվազեան՝ ատենապետ, Գ. Ս. Քէպապեան՝ ատենադպիր, Միհրան Գարակէօզեան՝ գանձապետ, գեր. Պօղոս վարդապետ Գաֆթանեան, վեր. Խ. Պէննէեան, դոկտ. Մ. Ս. Գաբրիէլեան և Յովհաննէս Քէլէկեան։

Բոստոն.—Նորակազմ մասնաժողովի անդամներ են՝ տեարք Կ. Յ. Գարակիւլեան՝ ատենապետ, Ն. Թիւֆենքճեան՝ ատենադպիր, Խ. Գրիգորեան՝ գանձապետ, Ս. Սելեան և Մ. Աճէմեան։

Բրաքթըն.—Նորակազմ մասնաժողովի անդամներն են տեարք Գրիգոր Պալթայեան ատենապետ, Աբիկ Պ. Ճգնաւորեան՝ ատենադպիր, Թադէոս Ծառուկեան՝ գանձապետ, Ասատուր Նաճարեան և Գասպար Մօսիկեան։

Սըվազ.—Տեարք Սենեքերիմ Պաքքալեան մասնաժողովին ատենապետ և Օհան Շիրինեան գանձապետ ընտրուած են։

3) Ստորև կը դնենք Միութեանս անունով և հաշւոյն հայաբնակ գիւղերու մէջ յունվար 1-էն սկսեալ բացուած 20 նախակրթարաններու ցուցակը, զոր Միացեալ Ընկ. տնօրէն ժողովը հաղորդած է ժողովիս։

Սղերդ՝ ծաղկոց, Տէհ, Հազրօ. Ղազրան գաւառակի մէջ՝ Ռնտուան, Զօդ, Գուլին, Ցոբ, Սալափան. Սասունի մէջ՝ Հազրօ. Տչեբիկի մէջ՝ Կրասէրա, Քէրիք, Կունտէճանօ, Խասրունար. Սլիվանի մէջ՝ Հաշթեր, Հէյին և Պաշնիք. Կիլիկիոյ մէջ՝ Ալեքսթան, Կապան, Վահկայ և Հաջի-Հաբիբլի։

Առանձնէ Սղերդի, Տեհի, Հազրոյի, Ալեքսթանի, Կապանի և Վահկայի վարժարանները 1910-ին Միացեալ Ընկ. կողմէ արդէն հիմնուած ըլլալով Միութեանս փոխանցուած են։

Ինչպէս յայտնի է, վերոյիշեալ 20 նախակրթարաններուն վարչութիւնը յանձնուած է Միացեալ Ընկերութեան։

4) Կեդր. ժողովը որոշեց Միութեան անունով և հաշւոյն առաջիկայ սեպտեմբերին վարժապետանոց մը հիմնել Վանի մէջ, 600 օսմ. ոսկի տարեկան ծախքով, որուն 450 ոսկին Միութեան կողմէ պիտի հոգացուի և մնացեալը արդէն ապահովուած է կտակ և նուէրներով։ Վարժապետանոցին վարչութիւնը ևս պիտի յանձնուի Միացեալ Ընկերութեան։ Նախնական պիտոյքներու և կազմածներու գնման համար 200 անգլ. ոսկիի գումար մը ևս տրամադրուած է Միացեալ Ընկերութեան։

5) Միութեան կողմէ հետևեալ նպաստները ղրկուեցան.

80 անգլ. ոսկի Զէյթունի Կեդր. վարժարանի շինութիւնը աւարտելու համար, 10 անգլ. ոսկի Զէյթունի կարօտ հիւանդներուն դեղի համար, 10 անգլ. ոսկի Հաճընի կարօտ հիւանդներուն դեղի համար, 15 անգլ. ոսկի Ագիւլէի (Սըվազ) ազգ. վարժարանին, 30 անգլ. ոսկի Խորասանի (Սըվազ) ազգային վարժարանին, 40 անգլ. ոսկի Դուրէնդէի ազգ. վարժարանի շինութեան համար (նախապէս արդէն ղրկուած էր 20 անգլ. ոսկի), 12 անգլ. ոսկի Աշոտի (Սըվազ) ազգ. վարժարանին, 20 անգ. ոսկի Պուրունգըլայի (Եօզղատ) ազգային վարժարանին, 15 անգ. ոսկի Ռումտիկինի (Եօզղատ) ազգ. վարժարանին աղջկանց, 20 անգլ. ոսկի Լաթաքիայի ազգ. վարժարանին, 30 անգլ. ոսկի Սինձանի (Տիվրիկ) ազգ. վարժարանին, 15 անգլ. ոսկի Խուռնավիլի ազգ. վարժարանին, 20 անգլ. ոսկի Արաբկիրի ազգ. վարժարանին, 20 անգլ. ոսկի Արաբկիրի կարօտեալներուն, 20 անգլ. ոսկի Չմշկածագի ազգ. վարժարանին, 20 անգլ. ոսկի Չմշկածագի կարօտեալներուն, 20 անգլ. ոսկի Քեսապի ազգ. վարժարանին, 20 անգլ. ոսկի Քեսապի շրջակայքի կարօտեալներուն, 12 անգլ. ոսկի Բաշուգակի (Զարսանջակ) կարօտեալներուն, 25 անգլ. ոսկի Հիւսէյնիկի (Խարբերդ) ազգային վարժարանին, 20 անգլ. ոսկի Բիրէջիկի (Հալէպ) ազգային վարժարանին, 30 անգլ. ոսկի Ակնայ ազգ. վարժարանին, 30 անգլ. ոսկի Թամզարայի (Շաբին Կարահիսար) ազգ. վարժարանին, 12 անգլ. ոսկի Էվերէկի (Կեսարիա) ազգ. վարժարանին, 10 անգլ. ոսկի Խարբերդի «Արշալոյսի հայուհեաց» մանկապարտէզին, 100 անգլ. ոսկի Միացեալ Ընկերութեան, 50 անգլ. ոսկի Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան, 50 անգլ. ոսկի Թելերմէնի, Բրդնիկի և Նոր-Շէնի հայ-կաթոլիկ վարժարաններուն, 70 անգլ. ոսկի Մուշի և Սասունի կարօտ հողագործներուն՝ հաւաքաբար եզ գնելու համար, (նախապէս երկու անգամէն ղրկուած էր արդէն 180 անգլ. ոսկի), 20 անգլ. ոսկի Կէմէրէկի կարօտեալներուն ի նպաստ՝ հաւաքաբար շերամաբուծութեան յատուկ նախնական պիտոյքներ գնելու համար, 20 անգլ. ոսկի Ադանայի հայ-կաթոլիկ որբանոցին 50 անգլիական ոսկի Նաճաքլըլի կարօտ հողագործներուն՝ հաւաքաբար եզ գնելու համար (50 անգլ. ոսկի նախապէս ղրկուած էր արդէն) 30 անգլիական ոսկի Բայազիտի կարօտ հողագործներու՝ հաւաքաբար հողագործական պիտոյքներ գնելու համար, 80 անգլիական ոսկի Հաճընի ազգ. որբանոցի շինութիւնը աւարտելու համար։ Ընդամենը 1026 անգլ. ոսկի ղրկուած է վերջին նպաստներուն։

6) Հետևեալ կարևոր նուիրատուութիւնները եղած են Միութեան.

ա) Տեղւոյս ազգայիններէն բնիկ ակնցի տիար Սեդրաք Դաւիթեան նուիրած է 90 եգիպտ. ոսկի արժողութեամբ 16 արժեթուղթ «Սիէքըըրի է Րաֆինըրի դ'Էժիպտ», 10 արժեթուղթ «Բանք դ'Աթենին», ինչպէս նաև շուրջ 700 եգիպտ. ոսկիի արժողութեամբ երեք կտոր կալուած Նուբարիէի 70 ֆէդդան, Դեմիրտաշի 1,500 մէտր քառ. և Մահմաշայի 900 մէտր քառ. մէջ։

Ըստ կանոնագրի վեհանձն մարդասէրը այս նուիրատուութեամբ կը ստանայ «պատուոյ անդամի» տիտղոսը։

բ) Մարքիզուհի Ռօբէրթօ Վենթուրի Մենօրի, ծնեալ Ինջի դ'Աբրօ, նուիրած է 400 անգլ. ոսկի և անդամ արձանագրուած է 1,200 ֆրանք տարեվճարով։

Ըստ կանոնագրի բարերար տիկինը ևս «պատուոյ անդամ» կըլլայ։

գ) Իսմիրի ազգայիններէն ծանօթ գրագէտ տիար Մեսրոպ Նուպարեան նուիրած է սոյն քաղքին մէջ ունեցած մէկ խանութը, 500 օսմ. ոսկի արժողութեամբ և տարեկան 30 օսմ. ոսկի եկամուտով, զոր ցմահ ինք պիտի գանձէ։

Ըստ կանոնագրի ազնուոգի նուիրատուն «պատուոյ անդամ» կըլլայ։

դ) Պարիզի «Հայկազեանց Ուսումնասիրաց Ընկերութիւնը» Միութեան տրամադրած է 16,000 ֆրանք արժողութեամբ գոյքերը, որոնք կը բաղկանան արժէքաւոր թուղթերէ՝ առոնց եկամուտովը յանուն յիշեալ Ընկերութեան հայաբնակ գիւղի մը մէջ նախակրթարան մը բանալու և վարելու պայմանաւ։

ե) Տեղւոյս «Զէյթունի Բարեսիրաց Ընկերութիւնը» լուծուած ըլլալով, գործադիր ժողովը Միութեան յանձնած է Եգիպտական Կրէդի Ֆոնսիէի 6 պարտաթուղթ—4-ը 1886 և 2-ը 1903-ի — շուրջ 75 անգլ. ոսկի արժողութեամբ, ինչպէս և 2,000 եգ. ղրուշի գումար մը, որ կը կազմեն յիշեալ Ընկերութեան գոյքը, առոնց եկամուտով Զէյթունի մէջ կրթական գործին նպաստելու և կամ աշխատութեան միջոց հայթայթելու համար։

7) Մասնաճիւղներէն մի քանին տակաւին ժողովիս ղրկած չըլլալով անցեալ շրջանի համարատուութիւնը, կը խնդրուի փութացնել, նկատի առնելով որ Միութեան ընդհանուր ժողովը պիտի գումարուի յառաջիկայ 20/2 ապրիլ 1911-ի կիրակի օր։

Այս առթիւ մասնաժողովները կրնան առաջարկութիւններ ներկայացնել ընդհ. ժողովին մինչև 12/25 մարտ։

Ի դիմաց Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչ. Ժողովի՝
ատենադպիր՝ Վ. Մալեզեան
Կահիրէ, 31 յունվար

---

*) Տես «Исторія русскаго пр. ва», проф. А. Н. Филиппова.

րի համար, որովհետև առատ եկամուտ չէ եղել, բացի սար տեղերից։
Ալ. Տէր-Յարութիւնեանց

Համեստ նուիրաբերութիւններ

Գանձակ, 14 մարտի

Երէկ, կիրակի, հողին յանձնվեց Գանձակի բնակչուհի այրի Գիւլի Մարտիրոսեան Ալիխեանցի մարմինը։ Նա մօտ 65 տարեկան էր։

Բարի և աղքատասէր մօր յիշատակը ընդմիշտ պահպանած լինելու համար՝ նրա որդի Սերգէյ Ալիխեանը, նախկին երէցփոխ ս. Յովհաննէս եկեղեցու, արեց հետևեալ նուէրները. 1) ս. Յովհաննէս եկեղեցուն 500 ր. արժողութեամբ $6^0/_0$-աբեր անուանական մի տոմսակ, որի տոկոսիքով պէտք է ուսանեն նոյն եկեղեցու ծխ. դպրոցի աղքատ աշակերտ-աշակերտուհիները. 2) Կորիւնապատ անուանեալ արուարձանի համար ջուր մատակարարելու ֆոնդին 100 րուբլի և 3) հանգուցեալի քրոջ ժառանգներին մի կալք՝ արժողութեամբ մօտ 400 րուբլի։

Եկեղեցում Գրիգոր աւ. ք. Թումանեանցը մի դամբանականով գրուատեց բարի գործը։
Գանձակեցի

Ազատված զոհեր

Փօթի, 13 մարտի

Ռիոն գետի վարարելուց, անցեալ անգամ հրաշքով ազատվեցին երկու գիւղացի վրացիներ, որոնք շրջակայ գիւղերից նաւակով եգիպտացորեն էին բերել Փօթի՝ ծախելու նպատակով։

Բայց դեռ քաղաք չը հասած՝ նաւակը ջարդվում է հսկայական սառոյցներից, և նրանց հալալ աշխատանքի պտուղները կատաղած գետին են բաժին դառնում։ Խեղդվողները, բարեբաղդաբար, շուտ են նկատվում մի խումբ մարդկանցից, որոնք, լսելով նրանց յուսահատ աղաղակները՝ պատշաճ պիտոյքներով ազատում են զոհերին։

Ամսիս 28-ին տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում կը կայանայ գրական-երաժշտական երեկոյթ, որի զուտ արդիւնքը կը յատկացվի Նաբադայի բնակչութեան, որը, ինչպէս յայտնի է, մեծ վնասներ կրեց հեղեղից։

Սաստիկ քամու և ծովային մրրկի պատճառով, նաւերի կանոնաւոր երթևեկութիւնը խախտվել է։
Մխիթար

Երեկոյթ Շևչէնկոյի յիշատակին

Եկատերինօդար, 15 մարտի

Շաբաթ, մարտի 5-ին, տեղիս 2-րդ ժողովարանի դահլիճում կայացաւ Ուկրայնայի տաղանդաւոր բանաստեղծ և նկարիչ Տ. Գ. Շևչէնկոյի մահվան 50-ամեակի առիթով յօբելեանական գրական-երաժշտական երեկոյթ, որից գոյացած զուտ արդիւնքը պիտի յատկացվի Կիևում արձան կանգնեցնելու համար (Շևչէնկոյի)։ Երեկոյթին մասնակցում էին տեղական լաւ ոյժեր և մալօռօսական «Գլազունենկոյի» խմբի դերասան-դերասանուհիներ։ Բեմի վրա, արմաւենու տերևներով և գոյնզգոյն էլեկտրական կանթեղներով զարդարված, դրված էր մեծ գրողի «բիւստ»-պատկերը։ Դահլիճը զարդարված էր պատկերներով՝ մալօռօս կեանքից. դահլիճի անկիւններում կային կիօսկներ, որտեղ վաճառվում էին պատկերներ, քաղցրաւենիք և այլն։ Հետաքրքրական երեկոյթի ծրագիրը, ժողովրդի ցանկութեամբ, կրկնվեց։ Վերջում «Կտակը» բանաստեղծի, որը երգեց զօրանոցի քառաձայն երգ. խումբը, հասարակութիւնը լսեց յոտնկայս։ Ժողովարանը լի էր երկսեռ հասարակութեամբ, որը ուրախ տրամադրութեան տակ ցրվեց գիշերվայ ժամը $1^1/_2$-ին։
Դաբլօիդ

Մեսրոպ արքեպիսկոպ. հոգեհանգիստ

Հին-Նախիջևան, 14 մարտի

Երէկ քաղաքիս ս. Գէորգ եկեղեցում կատարվեց էջմիածնի ականաւոր միաբաններից Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցի հոգեհանգիստը, որը ծնվել է 1833 թ. և վախճանվել այս տարվայ փետրվար ամսի 8-ին Երուսաղէմում և 10-ին թաղվել Երուսաղէմի ս. Յակովբի վանքի գաւթում։

Ծխական դպրոցի ուսուցիչներից Ա. Տէր-Գրիգորեանցը համառօտ կերպով պատմեց Մեսրովբ արքեպիսկոպոսի կատարած ծառայութիւնները հայ ժողովրդեան և եկեղեցուն, որից երևաց թէ՝ 1860-ական թւականներից Սմբատեանց սրբազանը վարել է յաջորդութեան, առաջնորդութեան, սինօդի անդամութեան, կաթողիկոսի տեղապահութեան և ճեմարանի վերատեսչութեան պատասխանատու պաշտօններ և միաժամանակ հետաքրքրվել է հայ ժողովրդի անցեալ և ներկայ կեանքով ու տուել մեզ առանձին-առանձին գրքերով Շամախու թեմի, Գեղարքունի գաւառի, Նախիջևանի գաւառի և իր գլուխ գործոց բևեռագիր արձանագրութիւնների տեղեկագրերը, որոնցով թէ մեզ հայերիս է ծանօթացնում մեր նախնիքների անցեալ փառքի բեկորների հետ և թէ եւրոպական հնագէտների ուշադրութիւնը հրաւիրելով դէպի հայկական անցեալ կեանքը՝ լուսաբանում է պատմական մութ մնացած կէտերը։

Մեսրովբ սրբազանը ռուսահայերիս մէջ առաջինը եղաւ, որ ոչ մի ջանք չը խնայեց, նուիրվեց հնագիտական ճիւղին, ի թիւս այլ բազմաթիւ հնութիւնների տուեց նաև մի քանի տասնեակ բևեռաձև արձանագրութիւններ (Հին Արմաւիրի և Սևանայ լճի շրջակայքից), իսկ վերջին 1910 թ. Սուրմալուի գաւառում Մասիս սարի ստորոտից գտաւ մի արձանագրութիւն Հալդեան գրերով և այդ բոլոր հնութիւնները այսօր կազմում են էջմիածնի թանգարանի մի մասը, ուր ամեն յաճախող կարող է տեսնել, և այդ բոլոր աշխատութեանց համար նա արդէն վարձատրված է «բևեռագրոց հայր» մականունով։ Այսօր յանձին Մեսրովբ սրբազանի հայ ազգը կորցրեց իր աշխատաւոր մշակներից մէկին։
Ուսուցիչ Ս. Սրգարեանց

Դպրոցական խնդիրներ Ներքին-Ագուլիսում և Օրդուբադում

Ներքին-Ագուլիս, 10 մարտի

Տեղումս դպրոցական կեանքը խանգարված է՝ շնորհիւ վարժուհու քմահաճ հրաժարվելուն տարվայ կէսին։ 4 բաժանմունքի ամբողջ ծանրութիւնը ընկած է աւագ ուսուցչի վրա։ Վարժուհու հրաժարվելու առիթով թէ հոգաբարձութեան և թէ աւագ ուսուցչի կողմից դիմված է թեմական առաջնորդին և սպասվում է պատասխանի։ Լրանում է և ներկայ հոգաբարձութեան ժամանակամիջոցը և ցանկալի էր, որ հոգաբարձական նոր ընտրութիւնը որքան կարելի է շուտ լինէր, որպէսզի ընտրվածները մինչև հաստատվելը—որը այնքան էլ շուտ չէ լինում—կարողանային ծանօթանալ դպրոցի գործերի հետ և ապա ստանձնելով իրանց պաշտօնը՝ պատրաստութիւններ տեսնել եկող ուսման տարվայ համար։

Հոգաբարձութեան շուտ ընտրութիւնը մի կողմից էլ օգտաւէտ է նրանով, որ նա արդէն իրաւունք կունենայ մայիսին հրաւիրել 1911—12 ուսումնական թւի համար աւ. ուսուցիչ, որի հետ միասին այնուհետև կը կարողանայ պարտաճանաչ ու օրինաւոր ուսուցչական խումբ պատրաստել։ Իսկ երբ այդ մնում է սեպտեմբերին, շատ պարզ է, որ վնաս է հասցնում դպրոցին. նախ՝ որ ուշ է սկսվում ուսումը և երկրորդ՝ շտապելուց՝ իւրաքանչիւր պատահական անհատի հրաւիրելով, զանազան անախորժութիւններ են ծագում, ինչպէս ցոյց են տալիս փորձերը։

Եւ առհասարակ ցանկալի էր, որ թեմական խորհրդից մայիսին մի հրաման դուրս գար՝ դպրոցների եթէ ոչ մանկավարժական ողջ կազմի, գոնէ աւագ ուսուցիչների հրաւիրման համար, որով միանգամից վերջ կը դրվէր մի քանի անկանոնութիւնների։

Խօսելով դպրոցի մասին, չենք կարող չը նկատել, որ հարևան Օրդուբադում, ինչպէս յայտնվեց իր ժամանակին («Մշակ» № 12), բացվեց միդասեան դպրոց և այժմ կանոնաւոր առաջ է դիմում և, եթէ կողմնակի օժանդակիչներ ունենայ, կարող է իր գոյութիւնը դեռ երկար պահպանել։

Օրդուբադում դպրոց ունենալուն համար՝ տեղացիք պիտի շնորհակալութիւն յայտնեն տեղացի հոգաբարձու Գալուստ Գրիգորեանցին, որովհետև նա էր, որ ազնուօրէն աշխատելով, իր տոկուն ու յամառ կամքի շնորհիւ, կարողացաւ վերջապէս գլուխ բերել սկսված գործը։ Նա էր, որ, ինչպէս ասում են, սև-երեսութեամբ, սրանից-նրանից կոպէկ-կոպէկ ժողովելով դպրոցական շէնք շինեց, և հէնց այժմ էլ դպրոցի ամբողջ ծանրութիւնը ընկած է նրա վրա, և երբեմն էլ իր գրպանից է հոգում զանազան ծախքերը։
Արշալոյս Տէր-Յովհաննեան

ՀԱՅՐԱՊԵՏ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Մենք ստացանք Բագուից հետևեալ հեռագիրը, հինգշաբթի երեկոյեան, ուշ.

«Այսօր տեղի ունեցաւ Հայրապետ Քալանթարի թաղումը, որ հանդիսաւոր եղաւ։ Ստացվել էին բազմաթիւ ցաւակցական հեռագրեր. ներկայ էին յատուկ պատգամաւորութիւններ՝ Մարդասիրական Ընկերութեան, Կուլտուրական Միութեան, հայոց ծխական դպրոցների հոգաբարձութեան և կանանց պրոֆէսիոնալ դպրոցի կողմից։ Հոգաբարձութիւնը հաստատեց երկու ստիպենդիա յանուն հանգուցեալի։ Ղուկասեան քահանան խօսեց մի բովանդակալից դամբանական»։
Գիւլմիսարեանց

ԱՍԽԱԲԱԴԸ ԵՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

V*)

Կրթական գործը ինչպէս որ ընդհանուր հայ իրականութեան մէջ, այնպէս էլ Ասխաբադի հայ համայնքում դրված է խախուտ հիմքերի վրա և չէ տալիս այն ցանկալի արդիւնքը, որ սպասել կարելի էր տեղիս հայ հասարակութիւնից և որը մի մեծ անհրաժեշտութիւն է ներկայացնում մայր-հայրենիքից հեռու վտարված հայ գաղթականութեան համար։

Հասարակութիւնը պահում է ծխական դպրոց, որի տարեկան բիւջէն 4—5000 րուբլու է հասնում. սակայն դպրոցը չունի ոչ մի հաստատուն աղբիւր, որով կարողանայ ծածկել ոչ-աննշան ելքը և միանգամայն ապահովել կրթական գործը։

Դպրոցը պահվում է պատահական միջոցներով, որ պատճառ է դառնում մի շարք վնասակար երևոյթների ու բացասական հետևանքների։ Օրինակ, բիւջէի չորրորդ մասը ծածկվում է աշակերտների թոշակով, որը գանձվում է շատ դժուարութիւններով։ Ճիշդ է, աշակերտների շարքում կան այնպիսիները, որոնք վերջին ծայր չքաւոր կացութեան մէջ գտնվելով անկարող են վճարել ուսման վարձը, բայց քիչ չեն այնպիսիներն էլ, որոնց ծնողներն իրօք մուրացկանութեան են վարժված և ամեն ջանք գործ են դնում ազատվելու 15 ր. ուսման վարձը վճարելուց՝ իրանց զաւակների կրթութեան համար, մինչդեռ նրանք ուրիշ դէպքերում պատրաստ են վատնել կրկնակի գումարներ։ Այսպիսի անձնաւորութիւնների հետ գործ ունենալու պատճառով դպրոցական վարչութիւնը, ցաւօք սրտի, ստիպված է լինում հեռացնել խմբերով աշակերտներին, մինչև որ նրանք կը վճարեն թոշակները։ Չը նայած միջոցը կոպիտ է և արդիւնաւէտ, սակայն միւս կողմից մեծ հարուած է հասցնում բարոյական դաստիարակութեանը և ուսումնական մասի առաջադիմութեանը։

Դպրոցի բիւջէն ծածկելու համար կազմակերպվում են երեկոյթներ, ներկայացումներ։ Ուսուցչական խումբը շաբաթներ շարունակ ստիպված է լինում նման աշխատանքների մէջ խրվել և, հասկանալի է որ, ֆիզիքապէս հնարաւորութիւն չէ ունենում բարեխիղճ կերպով տանել բուն ուսումնական գործը, որ աւելի բարձր է և գերադասելի։

Բիւջէի մի խոշոր մասը, մօտ 2,000 ր., լրացվում է ծխական տուրքով, որի գանձելն, ի հարկէ, առանձին աշխատանք է պահանջում։ Իւրաքանչիւր տարի հոգաբարձութիւնը դռնէ-դուռ ընկնելու է հարկադրված, լրացնելու այն զգալի բացը, որ գոյանում է բիւջէի մէջ։ Այստեղ պէտք է շեշտել, որ դպրոցի ամբողջ ծանրութիւնը ընկած է եղել անհատների վրա, որոնք իրանց նուազ ոյժերով կարողացել են միմիայն ժամանակաւորապէս պահպանել դպրոցի գոյութիւնը, իսկ ապահովել՝ նրանց ոյժերից վեր է եղել։

Դպրոցի՝ անապահով դրութեան մէջ գտնվելու պատճառներից մէկն էլ, մեր կարծիքով, կայանում է նրանում, որ ծխական տուրքը հաւաքվում է բացառապէս ունևոր դասակարգից, որն ամեն տարի էլ ձգում է իր լուման դպրոցի գանձարկղը։ Իրաւ, նրանցից շատերը սիրայօժար ու անտրտունջ վճարում են իրանց տուրքը, բայց եղել են այնպիսիները, որոնք հրաժարվել են տալ. և կարևոր է ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ չը նայած նրանց վճարածը մի կաթիլ է բաժակ ջրի մէջ իրանց կարողութեան հետ համեմատած, բայց և այնպէս պարբերական դիմումները միշտ միևնոյն՝ մի խումբ անձնաւորութիւնների, ձանձրոյթ և անտարբերութիւն է առաջ բերում նրանց շարքերում, քանի որ իրանց զաւակները, բոլորն էլ, սովորում են գիմնազիաներում, այն ինչ հասարակութեան միւս խաւերը, նրանք՝ որոնք իրանց զաւակներին ուղարկում են ծխական դպրոց, դժկամակութեամբ են վճարում ուսման վարձը։ Ծնողների սառնասիրտ և դատապարտելի վերաբերմունքը ծանր հարուած է հասցնում գործին, անտարբերութիւն առաջ բերելով նրանց մէջ, որոնք ամեն տարի էլ աջակցել են դպրոցի պահպանման գործին։ Ասածներիցս հետևում է, որ հասարակութեան բոլոր խաւերի վրա էլ անխտիր բարոյական պարտք է ընկնում նպաստել իրանց կարողութեան չափով կուլտուրական մտաւոր կեանքի բարձրացման գործին։
Հայկունի

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

II*)

Ովքեր կարող են լինել ընտրողներ

Այս հարցի վրա երկար կանգ առնելու կարիք չը կայ։ Կեանքի ամենաուժեղ, ամենակարող գործօնը ժամանակը կատարել է իր դերը և վճռել է հարցը։ Այլևս ոչ մի տարակուսութիւն չը կայ և ոչ մի կողմից։

Ամեն չափահաս, զաւակ հայ եկեղեցու՝ ընտրող է։

Հայկական անկախութեան դարերի առանձնաշնորհեալ ընտրողները, նախարարները, իշխանները, տանուտէրներն ընդմիշտ անյայտացել են ասպարէզից. Պօլօժենիէի մելիքների և իւզբաշիների մասին խօսք անգամ չէ լինում։ Կ. Պօլսի ամիրաները և էսնաֆները պատմական հետազօտութեան նիւթ միայն կարող են հայթայթել այժմ։ Բոլոր առանձնաշնորհեալները տեղի են տուել ժողովրդի առաջ։ Երկար տատանումներից յետոյ հայ եկեղեցու ժողովրդական ոգին տարել է յաղթանակը, ձեռք է բերել ընդհանուր, ազատ և ժողովրդական ընտրութեան իրաւունքը անվիճելի կերպով, այնպէս որ նոյնիսկ Իրազեկները դրա դէմ չեն խօսում և փաստերը անտես առնելով և կամ աղաւաղելով չեն վիճում։

Ես այստեղ ուզում եմ մի փոքր նկատողութիւն անել բոլոր նրանց, որոնք ի զուր ճգնում են հայ եկեղեցու առաքելական հիմունքը քանդելով միմիայն եպիսկոպոսները համարել կաթողիկոսական ընտրելիներ և համաձայնվում են տալ բոլոր հայ ժողովրդին ընտրելիութեան իրաւունքը։

Այդ ընթացքով նրանք իրանց կորցրած դատը իրանց ձեռքով թաղում են և անգիտակցաբար իրանք իրանց հակասում։

Ժողովրդական, ազատ, հաւասար ընտրութեան իրաւունքը անքակտելի կերպով կապված, զուգված է ընտրելիութեան իրաւունքի հետ. որևիցէ բաժանում, որևիցէ սահմանափակում այդ իրաւունքների՝ արդէն խախտումն է ազատ ընտրութեան իրաւունքի։

Քրիստոսի առաքելական եկեղեցում բոլոր անդամները մի և հաւասար են, հաւասար իրաւունքներով ընտրողներ և ընտրելիներ։ Եթէ ընդունում ենք, որ հայ եկեղեցին առաքելական ազատ ժողովրդական եկեղեցի է, և եթէ ընդունում ենք, որ բոլոր հայ եկեղեցու զաւակները ընտրողներ են, ինչպէս կարող ենք նրանց մերժել ընտրելիութեան իրաւունքը։ Այս ընթացքը տրամաբանական չէ։ Կամ պէտք է ընդունել, որ հայ եկեղեցին առաքելական, ազատ, ժողովրդական եկեղեցի է և նրա անդամները հաւասար ընտրողներ և ընտրելիներ են, և կամ յայտարարել, որ նա կղերական է, նրա տէրը, կառավարողը կղերականներն են և այն էլ բարձրաստիճան կղերականները, եպիսկոպոսները, և մերժել հայ ժողովրդին՝ իր քահանան, իր առաջնորդը, իր կաթողիկոսը ընտրելու իրաւունքը։

Բայց ով կը յանդգնի դիպչել հայ եկեղեցու զարմանալիօրէն ազատ ժողովրդական հիմունքներին, նրա աւետարանական մարդասէր և ազատ սկզբունքներին։ Ես զարմանում եմ, հիանում, թէ ինչպէս հայ ժողովուրդը, որի ընտանեկան կազմակերպութիւնը միապետական է—նոյնիսկ կարելի է ասել՝ բռնապետական—կոփել, կերտել է մի այդպիսի ժողովրդական, ազատ եկեղեցի։

Ճշմարտապէս զարմանալի է հայ եկեղեցու ժողովրդական ոգին։ Մենք առանձնապէս շեշտում ենք այս կէտը. նա ազատ է, նա ճկուն է, նա ժամանակին յարմարվող, ժամանակի հետ առաջադիմող է։ Մենք կարծում ենք, որ Աւետարանի վրա հիմնված մի եկեղեցու անզուգական յատկութիւնն է այդ ժողովրդական ոգին, որին՝ ճնշված հայ ժողովուրդը սիրել և խրացրել է։ Քահանան, եպիսկոպոսը և կաթողիկոսը ժողովրդական քուէին են կարօտ։ Առանց ժողովրդական ընտրութեան, առանց նրա ձայնին՝ չը կայ աստիճան, չը կայ կարգ, չը կայ պաշտօն։

Այո, այս իրաւունքը այլևս ամեն կողմից ճանաչվել է անվիճելի։ Հիմա տեսնենք, թէ ինչպէս է արտայայտված ժողովրդական ձայնը կաթողիկոսական ընտրութեան առիթով։ Իւրաքանչիւր թեմ տալիս է երկու պատգամաւոր, մին հոգևոր կարգաւոր, թեմի առաջնորդը, իբր կանխօրէն ընտրված, և մի աշխարհական, մասնաւորապէս այդ նպատակի համար անմիջապէս ընտրելով։

Թողնելով թեմական ընտրութեանց երկաստիճան դրութիւնը քննելը աւելի ընդարձակ ուսումնասիրութեան, այստեղ լռելեայն չենք կարող անցնել այն անիրաւութիւնը և զրկանքը, որ լինում է ընդարձակ և բազմամարդ թեմերի ժողովրդին յօգուտ փոքր և քիչ ժողովուրդ ունեցող թեմերի։ Մասնաւորապէս այս անիրաւութիւնը, այս զրկանքը աղաղակող է դառնում, երբ համեմատում ենք Թիւրքիայի թեմերը Ռուսաստանի թեմերի հետ։ Միթէ հանդուրժելի է, որ Երևանի վիճակը իր հարիւր-հազարաւոր ժողովրդով ունենայ հաւասար ձայն Բաղդադի կամ Բէյրութի հետ։ Համեմատելով Ռուսաստանի և Թիւրքիայի հայ ժողովրդի քանակութիւնները, միթէ կարելի է Թիւրքահայոց տալ 47 ձայն, իսկ ռուսահայոց՝ միմիայն 6 ձայն։ Ազգային եկեղեցական վարչութեան բարեկարգութեան նախանձախնդիր կաթողիկոսի առաջին գործերից մէկը լինելու է մի դարման գտնել այս տարօրինակ անարդարութեան։ Եթէ Թիւրքահայ թեմերը պակասեցնել այլ ևս պատշաճ և նպատակայարմար չէ համարվում, ռուսահայոց թեմերը բազմացնելու է։ Մեր յաջորդութիւնները ամենայն իրաւամբ թեմերի կարելի է վերածել՝ այս մասին պէտք եղած դիմումն անելով, ուր որ հարկն է։ Եւ ես կարծում եմ՝ որովհետև այդ պահանջի արդար լինելը արևի պէս բացայայտ է, առանց ծանր դժուարութիւնների կարելի է աջողութիւն գտնել։

Այստեղ մի փոքր նկատողութիւն պէտք է անեմ ըստ 1865 թւի եղանակին կաթողիկոսական ընտրութեան մասնակցող և կամ մասնակցել ուզող Թիւրքահայոց, որոնց գլխաւորն էր 1884-ին Ներսէս պատրիարքը։ «Մեր եկեղեցին ժողովրդական է», «կաթողիկոսը ազգէն, միայն ազգէն կընտրուի» մեծահնչիւն բացագանչութիւններից յետոյ իրաւունք են տալիս կրօնական համագումար ժողովին՝ պատրաստել եօթանուն մի ցանկ, որից միայն իրաւունք ունի ազգային ընդհանուր ժողովը իր ընտրութիւնը կատարելու։ Այդ եօթանուն ցանկից դուրս ոչ ոքի իրաւունք չունի ձայն տալու նա, ուրեմն նա ազատ ընտրութիւն կատարելու իրաւունքից զրկվում է՝ յօգուտ մի խումբ կրօնաւորների. ուրեմն Թիւրքահայը, որի օրինական ներկայացուցիչը համարվում է Կ. Պօլսի ազգային ընդհանուր ժողովը, ուղղակի և ազատ կերպով չէ ընտրում իր կաթողիկոսական ընտրելիներին։ Թէպէտև 1865-ի եղանակը իր հազար տեսակ թերութեանց պատճառով մերժված և անգործադրելի է արդէն, բայց մենք՝ «Ովքեր են ընտրողներ» վերնագրի տակ մեր ակնարկներում՝ չենք կարող չը յիշել մի այսպիսի իրաւաբանական խոշոր սխալի մասին, որը գիտակցաբար թէ անգիտակցութեամբ իրանց թոյլ էին տուած պօլսահայ գործիչները։ Հայ ժողովուրդը դասակարգերի բաժանել և եկեղեցականներին որոշ, բաժանված և գերակշռող դեր տալ՝ դա մի ցաւալի սխալ էր, որը չը դիմացաւ հայ եկեղեցու ազատ ժողովրդական ոգուն և ընկաւ։ Այսպէս՝ ամեն փորձ, որ նպատակ ունենայ աղաւաղել հայ եկեղեցու առաքելական, ժողովրդական, ազատ ձգտումները, ուշ թէ կանուխ, բոլորն էլ պիտի փշրվի՝ զարնվելով հայ եկեղեցու առաքելական ազատ և ժողովրդական սկզբունքներին, որը դարերից ի վեր անխախտ կանգնած է կուրծք տալով բազմաթիւ և բազմադիմի հարուածների. հոգևորական և աշխարհական, իբրև հայ եկեղեցու զաւակ, նոյն և հաւասար իրաւունքն ունեն նրա ամեն տեսակ գործերում։ Հայ ժողովուրդն է հայ եկեղեցու տէրն ու պահապանը։ Մեր եկեղեցին կղերական առանձնաշնորհեալ դասակարգ չէ ունեցել և չէ կարող ունենալ։ Նա ունի ընտրեալ պաշտօնեաներ, բայց ոչ իշխաններ, ոչ ծիրանաւորներ։

Ամփոփելով մեր խօսքը՝ կրկնում ենք, որ ըստ հայ եկեղեցու և ըստ տիրող պետական օրինաց՝ հայ եկեղեցու իւրաքանչիւր չափահաս անդամ ընտրողական իրաւունք ունի կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, և այս՝ նրա անկապտելի իրաւունքն է և հայ եկեղեցու փառաց պսակը։
Յակոբ Մեղաւորեան

Բաթում, 16 մարտի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս յայտնի դարձաւ, մօտիկ ապագայում Պետերբուրգում կայանալու է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ միջվարչական խորհրդակցութիւն նոր բարձր կրթական հաստատութիւններ բանալու և եղածները ընդլայնելու հարցի առիթով։ Այդ խորհրդակցութեան մէջ Կովկասի Փոխարքայի կողմից ներկայացուցիչներ կը լինեն սենատոր Նիկոլսկին և Զուևսկին։ Փոխարքայի դիւանը սենատոր Նիկոլսկուն ուղարկել է բոլոր անհրաժեշտ նիւթերը, որոնք վերաբերում են Թիֆլիսում համալսարան բանալու խնդրին։

◆ Հայկական կեանքում առաջիկայում սպասվում են մի քանի յօբելեաններ։ Առաջինը կը տօնվի, ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցի դասատու Միսակ Սախեանի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը (ապրիլի 14-ին)։ Այս բազմաշխատ ուսուցչի կենսագրութիւնը համառօտակի տպված է «Նոր Դպրոցի» վերջին համարում։ Ապա, մայիսի 7-ին, տեղի կունենայ վիպասան Շիրվանզադէի գրական գործունէութեան 35-ամեայ յօբելեանը։ Սեպտեմբերին նշանակված է Ներսիսեան դպրոցի մի ուրիշ վաստակաւոր ուսուցչի՝ Զօհրաբեանի յօբելեանը։ Եւ վերջապէս թատրոնական սէզօնի սկզբին մտադրութիւն կայ տօնել դերասանուհի տ. Զաբէլի բեմական գործունէութեան 30-ամեակը։

◆ Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ, այսօր, ժ. 4—5, երեխաների համար տ. Նէմսաձէն վրացերէն կը դասախօսէ Չինաստանի մասին։ Վաղը Կ. Միրիմանեանը հայերէն, ժ. $9^1/_2$—11, կը խօսէ դարձեալ երեխաների համար աղի մասին։ Տիկ. Բարթիվէլօվան վրացերէն կը դասախօսէ ժ. 11—12 «Սուրամի բերդի» մասին։ Մուտքը ձրի է։

◆ Կովկասի Փոխարքային ներկայացաւ Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ իշխ. Ամիրաջիբին ենթարկվում է 100 ր. տուգանքի՝ ոստիկանութեան պաշտօնեաներին խօսքով վիրաւորելուն համար։

◆ Թիֆլիսի մսավաճառները ներկայումս տիրող՝ մսի անասելի թանգութիւնը բացատրում են նրանով, որ ինչ-որ միջնորդ-վաշխառուներ, գնելով առաջին ձեռքից անասուններին, ծախում են նրանց [illegible] գներով՝ Թիֆլիսի անասնաշուկայից դուրս։ Այդ չարիքի առաջն առնելու համար՝ մսավաճառները քաղաքային վարչութիւնից խնդրում են թոյլ տալ իրանց միջից նշանակել ութ մարդու՝ յիշեալ վաշխառուների վրա հսկելու համար։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը միջնորդել է հաստատելու Թիֆլիսում աւագ ոստիկանապետի պաշտօն։

◆ Նախագծվում է հրդեհաշէջների կայան հաստատել Նաւթլուղում։

◆ Վրաստանի էկզարխի կարգադրութեամբ մարտի 20-ին, 25-ին և 27-ին Թիֆլիսի զանազան տեղերում տեղի են ունենալու Ս. Երկրի մասին պաղեստինեան ընթերցանութիւններ։

◆ Այսօր, Արքունական թատրոնում, կը կայանայ դասախօսութիւն «սէրը նոր գրականութեան մէջ» թեմայով։ Մտքերի փոխանակութեանը կը մասնակցեն մի քանի հոգի։

◆ Երկուշաբթի օրը, Արտիստական թատրոնի դահլիճում, տեղի կունենայ երեկոյթ-համերգ յօգուտ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան։

◆ Վաղը, Արտիստական թատրոնում նշանակված է կովկասեան կանանց և տղամարդկանց բարեգործական ընկերութիւնների երեկոյթը։ Արժէ, որ հայ հասարակութիւնը սովորական տարիների նման նպաստէ իր եղբայրակից ազգութեան այդ համակրելի ընկերութիւնների երեկոյթին։

◆ Վաղը Նախալօվկայում, ժողովրդական համալսարանի նախաձեռնութեամբ, տեղի կունենայ ռուսերէն դասախօսութիւն՝ «Իօան Գրոզնի և նրա էպօխան»։ Կը դասախօսէ Երմօլաեվը։ Սկիզբն է ժամը 12½-ին։ Մուտքը ձրի է։

---

*) Տես «Մշակ» № 52.

*) Տես «Մշակ» №№ 50 և 51.

◆ Վաղը, կիրակի, Ժողովրդական Տանը Մ. Նաւիձէն ժամը 11-ին կը կարդայ դասախօսութիւն էժան կացարաններ կառուցանելու մասին։

ՄԱՄՈՒԼ

Ստօլիպինի յաղթութեան առիթով «Совр. Слово» լրագիրը հետևեալն է ասում բիւրօկրատական հոգեբանութեան մասին։

Այնտեղ, ուր պետական մարդու համար դիրքը անհնարին է դառնում, չինովնիկը հանդարտ մնում է իր տեղը նստած։

Բիւրօկրատական հոգեբանութեան մի մեծ գիտակ անձն, որ ինքը գործել է այդ շրջանում, երբ մինիստր է եղել, Վալուէվը, պատմում է մի քանի տիպիկական բաներ կոմս Պանինի մասին։ Երբ 1860 թ. այդ պաշտօնեան, որ թշնամի էր գիւղացիական ռէֆօրմին, նշանակվեց ղեկավար այդ ռէֆօրմի, նա մեծ իշխան Կոնստանդինի հետ ունեցած խօսակցութեան մէջ յայտնեց, թէ ինքը, Պանինը, համոզումներ ունի և այն էլ շատ զօրեղ։ Բայց եթէ որևէ ձևով, ուղղակի կամ անուղղակի, նա հաւաստիանայ, որ բարձր իշխանութիւնը գործին ուրիշ կերպ է նայում, քան ինքը, այն ժամանակ «ես պարտք եմ համարում իսկոյն յետ կենալ իմ համոզումներից և գործել նոյնիսկ բոլորովին հակառակ նրանց»։ Նոյն պետական գործիչը չափազանց զարմացաւ, երբ կոմս Բօբրինսկին մերժեց մասնակցել գիւղացիական հարցի մասին նշանակված ռէակցիօնական մասնաժողովներին, այն հիման վրա, որ իրան իրաւունք չէր տրված յայտնել առանձին կարծիք։ Կոմս Պանինը ասաց Բօբրինսկուն. «Այն, ինչ որ դուք ասում էք, իմ ամբողջ պաշտօնավարութեան դատապարտութիւնն է. իմ ամբողջ կեանքում ես միայն ստորագրել եմ թղթեր, որոնց ամենևին չէի հաւանում»։

Սրանից աւելի պայծառ կերպով նկարագրել բիւրօկրատական հոգեբանութիւնը անհնարին է։

Իր հնգամեայ էվօլիւցիայի ընթացքում, Ստօլիպինը, անկասկած, իւրացրել է այդ հոգեբանութիւնը նշանաւոր չափով, և դա հնարաւորութիւն կը տայ նրան կատարել «Новое Время» լրագրի խորհուրդը՝ յաղթել իր զգացումները և մնալ իշխանութեան մէջ, եթէ այդ հարկաւոր համարվի։

*

«С.-Пет. Вѣд.» թերթը Ստօլիպինի գործունէութեան մասին հետևեալն է գրում.

Այդ գործունէութեան թոյլ կողմը նրա անպետականութիւնն է, մակերեւութայնութիւնը, ինքնավստահութիւնը և անկարութիւնը։ Ստօլիպինը, անկասկած, տաղանդաւոր է, բայց նրա տաղանդը պետական մարդու տաղանդ չէ, այլ, աւելի շուտ՝ հռետորի, գրողի, պատմաբանի, կոմպիլատորի։ Գորեմիկինը, կոմս Վիտտէն, Պլեվէն և նոյնիսկ իշխան Միրսկին, իբրև պետական մարդիկ, Ստօլիպինից անհամեմատ աւելի տաղանդաւոր են։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 14 մարտի

Ախալցխայի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը սրտանց պարտք է համարում հրապարակով յայտնել իր խորին շնորհակալութիւնը պ. պ. Ա. Ա. Մընտոյեաններին, որոնք բարեհաճել են իրանց նորոգ հանգուցեալ փեսայի՝ Ս. Մինասեանի յիշատակին նուիրել, ի միջի այլոց, նաև Կանանց Ընկերութեանը մի 100 ր.։ Առաջին անգամը չէ, որ պ. Աշոտ Մնտոյեանը իր նուէրներով օժանդակում է Կանանց Ընկերութեանը։

Ի դէպ՝ յիշեալ Ընկերութիւնը բաց է անում իր ընթերցարանին կից կար ու ձևի արհեստանոց չքաւոր աղջիկների համար։ Այս յունվարի 21-ին վարչութիւնը դիմում է արել Նահանգական իշխանութեանը՝ իրաւունքի համար, ցարդ պատասխան չէ ստացվել. վարչութիւնը անհամբեր սպասում է դրական պատասխանի, որ ըստ այնմ գործի ձեռնարկէ։

Նախագահ վարչութեան՝
Ե. Զաթալբաշեան
Անդամ-քարտուղար՝ Ս. Բայբուրդեան

ԳՐԱԿԱՆ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԵԱՆ NEC PLUS ULTRA

(Նամակ խմբագրութեան)

Մի օր Յովհաննէս Մալխասեանը եկաւ ինձ մօտ և առաջարկեց ինձ, որ մի ընթերցարան կազմենք իր, Նար-Դոսի և իմ ընկերակցութեամբ։ Սկզբում ես զարհուրեցի այս առաջարկութիւնից, որովհետև ես տասնեակ տարիներ առաջ՝ իմ երիտասարդութեան օրերին՝ արդէն մի անգամ կազմել էի այդպիսի գործը «Ընտանեկան», «Դիւցազնական» և «Նահապետական աշխարհներ» անունով և փորձով գիտէի, թէ ինչ տաժանելի և պատասխանատու ձեռնարկութիւն է այն, ուր պէտք է մանրամասն քրքրվի մեր ամբողջ գրականութիւնը, որ ոչ մի գրադարանում ի մի ամփոփված չէ գտնվում։ Բայց երբ պարզվեց, որ նիւթ մատակարարողը առաւելապէս Մալխասեանը կը լինի, իսկ ընթերցարանին ոգի և դրօշմ տուողը ես պէտք է լինէի,— ընդունեցի առաջարկութիւնը։

Այսպէս սկսեցինք գործը ամենայն եռանդով ես և Մալխասեանը. Նար-Դոսը մինչև վերջը (մեղմ ասելով) ստուերի մէջ մնաց և գրեթէ սպառ չը մասնակցեց իսկական գործին, որովհետև արդէն միշտ զբաղված էր ամենօրեայ «Սուրհանդակ» թերթով։ Նա մի պատուաւոր անդամ (?!) էր մեր մէջ։ Իսկ ես և Մալխասեանը այնպէս իրար հաւատացինք խօսքով, որ նոյնիսկ մի պայմանագիր անգամ չը ստորագրեցինք, թէպէտ այդ մասին ինքը Մալխասեանը հարեանցի խօսք բաց արաւ, իսկ խօսքը մինչև վերջը գործ չը դառաւ, որովհետև ոչ մի կողմից պնդող չեղաւ, և կարծես թէ այդ բանին կարևորութիւն էլ չը տրվեց։

Այսպէս թէ այնպէս գործը տևեց 5 ամիս ամենայն խաղաղութեամբ, որ և՝ ըստ մեր կարծեաց՝ պսակված վերջացաւ։ Տպագրութեան ծախքը իր վրա յանձն առաւ Մալխասեանը. ես պէտք է միայն որոշ վարձ ստանայի աշխատութեանս համար։

Այս էլ պէտք է աւելացնեմ, որ եթէ մի որևէ տեխնիքական խնդիր էր ծագում մեր մէջ, միշտ Նար-Դոսը մեր խորհրդակցութեանը մասնակցում էր. զոր օրինակ՝ այդպիսի առիթներ էին ընթերցարանի անունը, գրքի ֆօրմատը, տպագրութեան տեղը, թղթի ընտրութիւնը, ուղղագրութիւնը, առաջաբանի գլուխներ ու կէտերը, պայմանագիր կազմելը և այլն, ուր մի խնդիր շատ անգամ կրկնվում և երեքնվում էր փոխադարձ համաձայնութեամբ, և արգելք չը կար, որ մեր ընկերական խօսակցութիւններում, երես առ երես (և ոչ թէ փողոցից ուղարկած ուլտիմատումներով) դարձեալ նորոգէինք և աւելորդ անգամ ծեծէինք տարակոյսները։ Այսպիսի դէպքերի համար միշտ պատրաստ կար Նար-Դոսի պատուաւոր աթոռը, երբ որ նա բարեհաճէր գալու։

Ահա այն ինչ մենք ամենայն միամտութեամբ բոլոր պատրաստութիւնները տեսանք հետևեալ օրը նիւթերը տպարանին յանձնել շարելու համար,—յանկարծ մեր մէջ ինչ-որ սև կատու անցաւ, և իմ 5 ամսվայ անընդհատ աշխատութիւնը ջուրը ձգվեց, Մալխասեանի նոր եղանակած երգերով։ Այժմ մեղրաձոր Մալխասեանը իր դիմակը երեսից հանեց և հանդիսացաւ ցինիկի բոլոր տգեղութիւններով։ Նախ նա գուժեց (!), թէ Նար-Դոսը հրաժարվում է, եթէ մեր կազմած աշխատութիւնը գլխովայր չը դնենք նրա ճաշակի և նրա քմահաճոյքների համեմատ (էաւ է. ոչինչ գործ չը կատարել, իսկ փողոցից պրետէնզիաներ յայտնել)։ Ապա Մալխասեանը աւելացրեց, թէ որովհետև 23 տարի Նար-Դոսի ընկեր է եղել, ուստի ինքն էլ հրաժարվում է։

Էհ եթէ երկուսն էլ հրաժարվում են, ապա ուրեմն աշխատութիւնը ինձ է մնում։ Բայց ոչ, պ. Մալխասեանը աւելի խելօք գտնվեց (իրանն այդպիսի խելօքութեան). նա իմ բոլոր աշխատութիւնը արդէն վաղօրօք շալակել էր և ապահով կերպով իր տունն էր տարել։

Արդ, մերկ իրողութիւնն այս է. պ. Մալխասեանը հինգ ամիս ինձ աշխատեցրեց, վերջը, ինձ ասում է, թէ «էլ պէտք չես ինձ», և դաւաճանում է ինձ։ Ես ուրեմն օր ցերեկով ալան-թալան եմ եղել նրա ճարպիկ ձեռքով։

Ի՞նչ անուն պիտի տանք այս քաջագործութեան։ Եթէ ասենք գրագողութիւն (պլագիատ), այս քիչ է։ Գրագողութիւնը մի նենգութիւն է, ուր հեղինակը այնուամենայնիւ իր սեփականութիւնը չէ կորցնում։ Իսկ իմ սեփականութիւնը շալակել տարել են։ Մենք ուրեմն մեր առաջ ունենք խաչագողութեան մի նոր տեսակ, մի նոր սալէցիֆիկուս, որ Րաֆֆին մոռացել է իր «Յիշատակարանի» մէջ սև մրով ներկել։

Խօսք չը կայ, վաղը Յովհ. Մալխասեանը դարձեալ ժպիտով իր ձեռքը կը մեկնէ հասարակութեան անդամներին։ Բայց ինչ պիտի ասեն նրան Աւ. Իսահակեանը, Աւ. Եգեկեանը, Մարգարը, Ծուղուրեան քահանան, Ստ. Մալխասեանցը, Բերբերեանը, Ե. Շահ-Ազիզը, Ա. Ջամինեանը և դարձեալ շատ ուրիշները, որոնց առաջ որ նա սև-երես է մնում, այս պարոն Յովհաննէս Մալխասեանը։

Սեդրաք Մանդինեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Տեղապահ տէր Վահրամ արքեպ., իր հետ ունենալով տէր Գնէլ ծ. վարդ. և դոքտ. Տաղաւարեանը, այցելեց նախ էվկաֆի մինիստրին, որ սիրով ընդունեց զինքը։ Տեղապահն յետոյ այցելեց ծովային մինիստրին, իր պաշտօնատան մէջ։ Տեղապահ սրբազանն յետոյ գնաց Ազարեան էֆ.-ի տունը, ուրկէ միասին առնելով զինքը՝ ծերակոյտի Նախագահ Սայիդ փաշայի ապարանքն այցելութիւն մը տուաւ։ Սայիդ փաշան հոն չըլլալով՝ կարելի չեղաւ իրեն այցելել։ Յետոյ այցելեց երեսփ. Ժողովին Նախագահ Ահմէդ Րիզա բէյի ապարանքը։ Տեղապահ սրբազանը ինչպէս ամեն մինիստրներուն, նոյնպէս երեսփ. Ժողովի Նախագահին պարզեց հայ ազգին հայեացքներն և հաւատարմութիւնն օսմ. հայրենիքին։ Ահմէդ Րիզա բէյ իր կողմէ հաւաստիք տուաւ, թէ կառավարութիւնը ջերմապէս կը գնահատէ հայոց հայրենասիրութիւնը։ Ահմէդ Րիզա բէյ ազգերու համերաշխութեան տեսակէտով ծառայութիւն մը մատուցանելու համար Կանդիլլի աղջկանց վարժարան մը հիմնելու ձեռնարկած ըլլալն յայտնեց։ Այդ վարժարանին մէջ որոշուած ըլլալով ամեն ազգերու կրօնքն և լեզուն աւանդել, Ահմէդ Րիզա բէյ խնդրեց տեղապահ սրբազանէն, որ այցելէ այդ վարժարանը, և եթէ նոյն իսկ կարելի է, ինքն ստանձնէ հայ աղջիկներու կրօնքի դասը։ Տեղապահ սրբազանն իր կողմէ խոստացաւ յարմար առթիւ մը այցելել, յայտնեց, որ թէև իրեն համար անկարելի է դաս ստանձնել, սակայն երբ որ ուզուի, կրնայ պատրիարքարանէն ձեռնհաս ու լրջամիտ եկեղեցական մի դասախօս կարգուիլ։ («Բիւզ.»)

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Այս օրերս Գերմանիայում, Աւստրիայում, Շվէյցարիայում և Դանիայում տեղի ունեցան կանանց հսկայական ցոյցեր, պահանջելով քաղաքական հաւասարութիւն և ընտրողական իրաւունք կանանց համար։

◆ Բարձրագոյնս հրամայվեց ֆինլանդական սենատին բաց թողնել առանձին խնայողական ֆօնդից մօտ 1.800,000 մարկ Հէլսինգֆօրսում արքունի հաստատութիւնների համար շինութիւններ կառուցանելու համար։

◆ Պարիզի առևտրական պալատը բացասաբար վերաբերվեց՝ 1920 թ. Պարիզում համաշխարհային ցուցահանդէս հիմնելուն։ Պալատը կարծում է, որ դժուար է այդպիսի գործ յուսալ, երբ յոյս չէ կարելի դնել բանուորների վրա։ Նախ քան ցուցահանդէս հիմնելը, անհրաժեշտ է հարցնել բանւորական միութիւններին, թէ ուզում են արդեօք նրանք համաշխարհային ցուցահանդէս կազմակերպել։

◆ Մարտի 11-ին Պ. Ստօլիպինը նորից Ցարսկօէ-Սէլօ գնաց, որտեղից վերադարձաւ ցերեկվայ ժ. մօտ 3-ին։ Երեկոյեան բոլոր մինիստրները հրաւէր ստացան գնալ պրեմիէրի մօտ իր բնակարանը՝ արտակարգ նիստի։ Յայտնի դարձաւ, որ մինիստրների խորհրդի նախագահը կաբինէտի անդամներին հրաւիրեց նրա համար, որպէս զի յայտնէ նրանց, որ ճգնաժամը վերջացած է, որ նա մնում է իր պաշտօնում և որ ոչ մի փոփոխութիւն չի լինի կաբինէտի կազմի մէջ։

◆ Հաղորդում են, որ Ստօլիպինը համաձայնեց մնալ իր պաշտօնում նրանից յետոյ միայն, երբ նրան տրվեց վճռական դեր Պետական Խորհրդի անդամների ցուցակները կազմելու գործում, նաև իրաւունք ունենայ լրացնել անդամների թիւը այն դէպքերում, երբ հարկ կը լինի տարվայ կէսին։

◆ Թիւրքաց կառավարութիւնը տեղեկացրեց ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան, որ նա դժուարանում է թոյլ տալ օսմանեան պետութեան սահմաններում ռուս գաղթականների՝ անդրկովկասեան լեռնականներից, որոնց սկզբում թոյլ էր տուել գաղթել Պարսկաստան ռուսաց կառավարութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը իր այդ արգելքը բացատրում է նրանով, որ Թուրքաստանը ներկայումս բոլորովին չէ ազատվել խոլերայից։

◆ Բժիշկները երկիւղ են կրում ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովի հիւանդութեան վախճանից։

◆ Պետերբուրգի քաղ. վարչութիւնը 50,000 րուբլի նուիրեց ի յիշատակ Ռոմանօվների տան 300-ամեակի Պետերբուրգում տաճար կառուցանելու գործին։

◆ Մօտիկ ապագայում Դումային կը ներկայացվի այն օրինագիծը, որով 4½ միլիօն րուբլի է խնդրվում հակաժանտախտային և հակախոլերային ձեռնարկութիւնների համար, որպիսի գումարը գործադրվելու է զեմստվօների և քաղաքային ինքնավարութիւնների ձեռքով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
17 մարտի

ՊԱՐԻԶ։ Լակուրը դատապարտվեց 3 տարով բանտարկութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վախճանվեց սենատոր Կրիստին։

Մօսկվայում մարտին թոյլատրված է կայացնել կինեմատօգրաֆային գործիչների համագումարը։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Անարացիտ կայարանում պօստային բաժանմունքը կողոպտելու գործի առիթով զինւորա-նահանգական դատարանը 5 հոգու դատապարտեց մահվան պատժի, մէկին ցմահ տաժանակիր աշխատանքների, չորսին բանտարկութեան, երեքին արդար ճանաչեց։

ՆՈՎՕՐԱԴՕՄՍԿ։ Մարտի 16-ին, երեկ. ժամը 5-ին, Վիգլէվում անյայտ չարագործներ կանգնեցրին Վարշավայի պօստային գնացքը և կողոպտեցին 30,000 րուբլի, վիրաւորելով 2 հոգու։ Չարագործների ետևից ուղարկած զօրախմբերը գտան ճանապարհին՝ պայուսակներում՝ 12,000 րուբ.։ Դէպքի՝ տեղը մեկնեց նահանգապետը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

Մօսկվա, Ոսկու-Ջօնին.—Եթէ ձեր յօդուածները ուսանողական շարժումների մասին կրճատվում են, իմացէք, որ դա կատարվում է մեզանից անկախ պատճառներով. դուք էք բողոքում։ Հարկաւոր է, որ թղթակիցները ի նկատի ունենան և խմբագրութեան դրութիւնն ու ժամանակակից պայմանները։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 4711
PARFUMERIE F. MÜLHENS
№ 4711

ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆ
անպայման անհրաժեշտ է կաշուի և երեսի գոյնի րացիօնալ հոգացողութեան համար։
Գլիցէրինի մեծաքանակ բովանդակումն, ցրնտութիւն՝ փրփուրի ստացւելու պատճառով, վարդի քնքոյշ անուշահոտութիւն,—ահա յատկութիւններ, որոնք զանազանում են այդ սապոնը։
ԿՏՈՐԸ 25 ԿՈՊ.
Իսկականը միայն մարկայով 4711.
ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԵՆՍ
Պարֆիւմէրիա 4711 Քէօլնում՝ Ռէյնի վրա։
Հիմն. 1792
ԲԱԺ. ՌԻԳԱՅՈՒՄ
Մատակ. շտս Բարձ. Պալատ.
Ծախվում է դեղատներում և դեղատն. ու պարֆիւմ. խանութներում։

(Մ. 436432/436450) 33. 11—9

Բացված է բաժանորդագրութիւն
„ԿՈՉ“
Գրական-քննադատական և հասարակական երկշաբաթաթերթ։
Բաժանորդագինը Ռուսաստանում տարեկան—2 ր., առանձին համարը—10 կ.։ Արտասահմանի համար՝ տարեկան 3 ր., առանձին համարը—15 կ.։
Ապրիլի սկիզբներին լոյս կը տեսնէ առաջին համարը։
Խմբագրութեան հասցէն՝ Баку, ул. Гоголя, д. Мухтарова, зубн. вр. Мартиросу Каграманянцу.
252. 2—1

Հրաւէր
Կիրակի, մարտի 20-ին, առաւօտեան ժամը 11-ին, Շամքօրեցոց ս. Աստուածածնի եկեղեցում նշանակված է ծխականների առաջին ընդհանուր ժողով, կատարելու նոր երեցփոխի ընտրութիւն՝ պաշտօնից հրաժարված երեցփոխ Եփրեմ Մկրտումեանի փոխարէն, որի համար յայտնելով յիշեալ եկեղեցու չափահաս ծխականներին, խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ Բ. մասի՝
Ղևոնդ ք. Մամիկոնեան

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien -ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—77

ԾՈՒՂՈՒՐԵԱՆ Յ. ՔԱՀԱՆԱՅԻ
„Տիրևանց Նախշունը“
վէպը
շուտով լոյս կը տեսնի։ Լոյս տեսնելուց առաջ պատուէր տուողին հատն արժէ 60 կ., իսկ հարիւրին 25% զիջումն։ Գրավաճառներին կօմիսիայով չի տրվի, կանխիկ վճարով միայն։
Հեղինակի հասցէն.—Тифлисъ, Михайловскій пр. № 38.

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, կկի, հիւանդութիւններ,
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—59

ՀԻՊՆՕՏԻԶՄԻ
ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՐՍ
Հիպնօտիզմը սահմանված է լինել ամենաուժեղ միջնորդը բուժական կրթական և բարենորոգչական զարգացման մէջ։ Որ հիպնօզական երևոյթը գոյութիւն ունի և որ ամեն ոք ենթարկվում է այդ բնական ոյժի ազդեցութեանը, այլ ևս կասկած չի վերցնում։ Հիպնօտիզմի կարևորութիւնը ընդունված է բոլոր նրանցից, որոնք ուսումնասիրած են այս գիտութիւնը։ Հիպնօտիզմի հակառակ խօսում են միայն նրանք, որոնք սխալ են ըմբռնած ներշնչման օրէնքը։
Ներշնչման սկզբունքի մէջ է գտնվում աջողութեան և առողջութեան ուղին և ոյժի-մուտքը։
ՍՈՎՈՐԵՑԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ. ՍՈՎՈՐԵՑԷՔ ՆԵՐՇՆՉԵԼ։
Հիւանդութիւնը անբնական է. սովորեցէք դարմանել ձեզ ձեր հիւանդութիւններից ձեր սեփական հոգու զօրութիւնով։
Մտախորհուրդը ոյժ է. սովորեցէք ուղղել ձեր մտախորհուրդը յօգուտ ձեր առողջութեան, երջանկութեան և աջողութեան։
Մասնագէտ հիպնօտիստ Յարութիւն Շէքէրջեանը պատրաստած է մի թղթակցական կուրս հայերէն լեզուով հայերի համար։ Այս կուրսը պարզ և հասկանալի լեզուով պարզում և բացատրում է հիպնօտիզմի և մտքի ոյժի երևոյթը, և սիստէմի վերածված դասերով սովորեցնում է ընթերցողին այս «խորհրդաւոր» գիտութեան բոլոր գաղտնիքները։
Հիպնօտիզմ կարող է սովորել ամեն ոք։
Հիպնօտիզմի կուրսի արժէքի և այլ մանրամասնութիւնների համար պէտք է ուղարկել 10 կոպէկի նամականիշ և ստանալ նոյն հեղինակի «Ինչպէս հիպնօտացնել» գրքոյկը։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago Ill. U. S. A.
(Ե. Չ.) 689. 100—77

ՄԻՆՉԵՒ ԾԱՂԿԱԶԱՐԴ
„Աղբիւր-Տարազի“ խմբագրութիւնը, զիջանելով բազմաթիւ ուսուցիչների, ծնողների և աշակերտների թախանձանքին, որոշեց շարունակել դպրոցական աշակերտների հասցէով մինչև Ծաղկազարդ ընդունել բաժանորդագրութիւն հետևեալ պայմաններով
I. ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ . . . տարին 2 ր.
II. ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ տարին 3 ր.
III. ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ, ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՏԱՐԱԶ, ԳԵՂԱՓՆՋԻԿ, ՕՐԱՑՈՅՑ, ԱՐՕՋԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ . . տարին 5 ր.
Ծաղկազարդից յետոյ այլևս ոչ մի բացառութիւն։ «Աղբիւր», տարեկան 3 ր., ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, բոլոր յաւելուածներով և պրէմիաներով 10 ր. (Արտասահման 18 ր.)։
Այն դպրոցներն ու գրադարանները, որոնք 10 ր. փոխարէն 5 ր. են ուղարկել, նրանք կը ստանան միայն ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ։
Ապառիկ կամ մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Հասցէն՝ (ТИФЛИСЪ. Редакція «АГБЮРЪ-ТАРАЗЪ».
(TIFLIS (Caucase). Direction AGBUR-TARAZ. 30. 0—7
(Հ. Հ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.